

Մերինե Խաչատրյան

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

2019

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում: Չեկույցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակ/ների տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Շնորհակալություն եմ հայտնում Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանին՝ սույն հետազոտության իրականացման գաղափարն իրագործելուն աջակցելու, ինչպես նաև ֆինանսական և խորհրդատվական օժանդակության համար:

Շնորհակալություն եմ հայտնում հետազոտության ընթացքում փորձագիտական և մասնագիտական կարծիք հայտնած անձանց, ովքեր մեծապես նպաստել են հետազոտության նպատակի իրագործմանը և որակի բարձրացմանը, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր իրենց աջակցությունն են ցուցաբերել սույն հետազոտության իրականացմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ</i>	<i>4</i>
<i>ՆԱԽԱԲԱՆ</i>	<i>7</i>
<i>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ</i>	<i>8</i>
<i>ԳԼՈՒԽ 1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</i>	<i>9</i>
§1.1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ	9
§1.2. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	15
ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՐՏԻԱ	15
§1.3. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	18
1.3.1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	20
§1.4. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	26
<i>§2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ (ՄԱՐՄԻՆՆԵՐԸ)</i>	<i>29</i>
<i>ԳԼՈՒԽ 2. ԱԶԳԱՅԻՆ (ՆԵՐՊԵՏԱԿԱՆ) ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ</i>	<i>33</i>
§2.1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ	33
§2.2. ՆԱԽՈՐԴ ԵՎ ԳՈՐԾՈՂ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	37
<i>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ</i>	<i>46</i>
<i>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</i>	<i>48</i>
<i>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</i>	<i>49</i>

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Սոցիալական իրավունքների վերաբերյալ սույն հետազոտության գլխավոր նպատակն է գնահատել թե արդյոք Հայաստանի Հանրապետության նոր՝ 2015թ. Սահմանադրությամբ նախկին Սահմանադրության համեմատությամբ սոցիալական իրավունքներն առավել պաշտպանված են, թե ոչ: Սոցիալական իրավունքների պաշտպանվածության մակարդակը գնահատելիս հաշվի են առնվել և ուսումնասիրվել նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները, դրանց ծավալը և կիրառելիության շրջանակները:

Մասնավորապես՝ հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության գործող և նախորդ Սահմանադրությունները, վերջիններիս հայեցակարգերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մասնագիտական վերլուծությունները, Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները սոցիալական իրավունքների բնագավառում, համապատասխան միջազգային փաստաթղթերի (պայմանագրերի) տեքստերը, դրանց վերաբերյալ միջազգային հեղինակավոր և իրավասու մարմինների վերլուծությունները:

Սույն հետազոտության հիմնական գաղափարը սոցիալական իրավունքների ոլորտում Հայաստանի քաղաքականության ուղղվածության կամ էվոլյուցիայի (շարժի) բնորոշումն է՝ սոցիալական իրավունքների պաշտպանվածության մակարդակը նախորդ և գործող Սահմանադրությունների լույսի ներքո պարզելու միջոցով:

Հետազոտության ընթացքում ձեռք բերված տվյալների հիման վրա արձանագրել ենք, որ գործող Սահմանադրությամբ ***սոցիալական որոշ իրավունքների մասով արձանագրվել է առաջընթաց, իսկ մյուսների մասով, ընդհակառակը, որոշակի առումով հետընթաց***: Այսպես, աշխատանքի անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, ինչպես նաև անձի հանգստի, աշխատաժամանակի սահմանափակման, վճարովի արձակուրդի և սոցիալական ապահովության իրավունքներն այժմ ամրագրվել են որպես օրենսդրական երաշխիք, ինչը, մեր կարծիքով, անընդունելի է և չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին: Այս կարևորագույն իրավունքների մասով օրենսդրին որոշակի հայեցողություն վերապահելը կամ ընդհանրապես անհասցե թողնելը (այս դատողությունը բխում է «օրենսդրական երաշխիք» հասկացության մեկնաբանությունից) աղավաղում է այս իրավունքների կարևորությունը և հնարավորություն տալիս օրենսդրի կողմից հայեցողության դրսևորման, որպիսի հանգամանքը չի համապատասխանում Վերանայված էվրոպական սոցիալական խարտիայի և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի ձևակերպումներին:

Սույն հետազոտության արդյունքները ևս մեկ անգամ վկայում են, ***որ սոցիալական օրենսդրությունն արմատական վերափոխման և համակարգայնացման կարիք ունի***: Ընդ որում, անհրաժեշտ է ընդունել մեկ ընդհանուր իրավական ակտ (օրենք)՝ կարգավորելով սոցիալական ապահովության բոլոր հիմքերն ընդհանուր առմամբ, ապահովել համակարգային կապ բոլոր սոցիալական իրավունքների միջև՝ ձևավորելով նաև կանխատեսելի և կոնսոլիդացված իրավական ակտ, իսկ սոցիալական այլ իրավունքների վերաբերյալ ընդունել հատուկ իրավական ակտեր՝ արտացոլելով կոնկրետ իրավունքի իրացման առանձնահատկությունները և տվյալ ոլորտում պետության քաղաքականության ուղղությունները:

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ անգամ տրված չէ **«սոցիալական ապահովություն»**, **«աշխատանքը կորցնել»**, **«բազմազավակություն»** հասկացությունների սահմանումը (սահմանված է միայն «սոցիալական աջակցություն» հասկացությունը, որն ամբողջությամբ չի նույնանում մատնանշված հասկացության հետ), ինչը ևս փաստում է մեկ միասնական իրավական ակտի շրջանակներում նաև այս սահմանադրական հասկացությունների և այլ կիրառելի հասկացությունների **օրենսդրական** սահմանման անհրաժեշտության մասին: Նշված հասկացությունների սահմանումը հստակություն կմտցնի և ուղենիշ կհանդիսանա համապատասխան իրավական նորմերի մեկնաբանման և պետության պարտավորությունների ծավալի հստակեցման հարցում:

Սույն հետազոտության արդյունքները և իրավական դիտարկումները կարող են կիրառելի լինել Սահմանադրությամբ ամրագրված և երաշխավորված իրավունքների, դրանց ապահովման ծավալի բնորոշման համար, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների, հիմնական միջազգային իրավական փաստաթղթերի և դրանց տեքստերի մեկնաբանման տեսանկյունից: Նշված տեղեկատվությունը կարող է կիրառելի լինել քաղաքականության հետազոտողների և քաղաքականություն մշակողների, գործող իրավաբանների, ուսանողների և սոցիալական իրավունքներով հետաքրքրված այլ անձանց համար:

Հետազոտության արդյունքների հիման վրա կատարվում են հետևյալ առաջարկությունները.

- Սահմանադրական փոփոխությունների շրջանակներում վերանայել որոշ սոցիալական իրավունքների՝ անձի հիմնարար իրավունքների շարքում վերստին ներառելու հարցը՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների ամբողջական կատարումը, ինչպես օրինակ անվտանգ ու առողջ աշխատանքային պայմանների իրավունքը, անձի հանգստի, աշխատաժամանակի սահմանափակման, վճարովի արձակուրդի, սոցիալական ապահովության իրավունքները:
- Ընդունել նոր օրենք «Սոցիալական ապահովության մասին» վերտառությամբ՝ համակարգային ձևով ամրագրելով Սահմանադրությամբ սահմանված սոցիալական ապահովության տրամադրման բոլոր հիմքերը և դրանց իրացման կառուցակարգերը, ինչպես նաև սահմանելով «սոցիալական ապահովություն», «գործազրկություն», «աշխատանքը կորցնել» և կիրառելի այլ հասկացություններն ու դրանց իրավական նշանակությունը:
- Հիմնովին վերանայել սոցիալական առանձին իրավունքների կամ առանձին խմբերի անձանց իրավունքների վերաբերյալ ընդունված բոլոր իրավական ակտերը՝ համապատասխանեցնելով Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով ամրագրված պետության պարտավորությունների ծավալին (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց, բազմազավակ ընտանիքների և այլն), ստեղծելով փոխկապակցված և համակարգված իրավական ակտերի համակարգ (համապատասխան օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր):
- Ապահովել աշխատանքային իրավունքների նկատմամբ հսկողություն իրականացնող տեսչական մարմնի ստեղծում՝ Աշխատանքի տեսչության մասին ԱՄԿ 81-րդ կոնվենցիային և ՀՀ կիրառելի իրավական ակտերին (օրինակ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք) համապատասխան:

- ՀՀ Կառավարության ծրագրում ավելացնել դրույթներ սոցիալական իրավունքների ոլորտում պետության քաղաքականության մի շարք թիրախային ուղղությունների վերաբերյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ, բազմազավակ ընտանիքների աջակցություն, ինտեգրված սոցիալական ծառայությունների նոր ինստիտուտի ներդրում (վերջինս արդեն երկու տարի ընթացքի մեջ է, բավականին մեծ քայլեր են կատարվել, սակայն Կառավարության ծրագրում ընդգրկված չէ):

ՆԱԽԱԲԱՆ

Աղքատության հաղթահարումը քաղաքավարական ժեստ չէ, դա արդարության գործողություն է, մարդու հիմնարար իրավունքների, արժանապատվության և արժանապատիվ կյանքի իրավունքի պաշտպանություն:
Նեյսոն Մանդելա

Սոցիալական իրավունքները մարդու իրավունքների շարքում զբաղեցնում են կարևորագույն և առանցքային տեղ: Ընդ որում՝ քաղաքական և քաղաքացիական իրավունքների և սոցիալական իրավունքների կապն այնքան սերտ և անբաժանելի է, որ նշվածներից որևէ մեկի խախտումն անխուսափելիորեն հանգեցնում է նաև մեկ այլ իրավունքի խախտման կամ ոչ բավարար իրացման (պաշտպանվածության) վիճակի:

2015թ. Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեի միջոցով ընդունվեց թվով 3-րդ Սահմանադրությունը: Նոր Սահմանադրության ընդունման անհրաժեշտության մասին կարելի է անվերջ բանավիճել և կողմ ու դեմ փաստարկներ ներկայացնել, սակայն մեր երկրի նոր հիմնական օրենքն արդեն մի քանի տարի գործում է, և դրա ընդունումն արդեն իրողություն է:

Սույն հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորված է գործող Սահմանադրության վերաբերյալ իրավական և մասնագիտական գնահատականի ձևավորման անհրաժեշտությամբ, մասնավորապես՝ սոցիալական իրավունքների ամրագրվածության և պաշտպանվածության տեսանկյունից: Հիմքը նոր Սահմանադրությամբ սոցիալական մի շարք իրավունքների նկատմամբ պետության մոտեցման փոփոխությունն է և սահմանադրական դրույթների ամրագրման տարբերությունը նախորդ Սահմանադրության համեմատությամբ: Հետազոտության շրջանակներում կատարվել է գործող և նախորդ Սահմանադրությունների համեմատական վերլուծություն՝ Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում, ինչպես նաև առանձնացվել և վերլուծվել են այն հիմնական միջազգային փաստաթղթերը և մարմինները, որոնք համապատասխանաբար կարգավորում են սոցիալական իրավունքները և իրականացնում են սոցիալական իրավունքների պաշտպանություն:

Սոցիալական իրավունքների կարևորության, ինչպես նաև վերջիններիս՝ քաղաքական և քաղաքացիական իրավունքների համեմատությամբ նվազ կարևոր չլինելու մասին, կարծում ենք, այլևս ժամանակավրեպ է խոսելը, քանի որ մարդկությունն արդեն հաղթահարել է այդ ժամանակաշրջանը: Մեջբերենք միայն ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Գլխավոր հանձնակատարի հետևյալ դատողությունը. «Նման տարբերակումն արհեստածին է և իսկզբանե դատապարտված է անհաջողության»: Նշենք նաև, որ ի վերջո Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը տարբերակում չի դնում վերոնշյալ իրավունքների միջև, ուստի իրավունքների արհեստական «աստիճանակարգման» պատճառներն առավելապես սուբյեկտիվ են, պայմանավորված պատմական իրողություններով և պետությունների՝ տվյալ ժամանակաշրջանում որդեգրած քաղաքականությամբ:

Սոցիալական իրավունքների ապահովումը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք՝ անկախ տարիքից և աշխատունակությունից, երաշխավորված լինի իր նվազագույն պահանջները և անհրաժեշտ ծառայությունները բավարարելու միջոցներով: Սոցիալական իրավունքները պետք է երաշխավորվեն առանց խտրականության՝ անկախ սեռից, առողջական վիճակից, ռասսայից, էթնիկ ծագումից, տարիքից, անաշխատունակությունից, կրոնից, ազգային ծագումից, եկամուտներից կամ սոցիալական կարգավիճակից:

Վերոնշյալ սկզբունքների հաշվի առնմամբ և տեսանկյունից կներկայացնենք սույն հետազոտության արդյունքները՝ զուգորդված իրավական նորմերի և պետության պարտավորությունների մասնագիտական վերլուծությամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են հիմնական հետևյալ մեթոդները՝ տեղեկատվության (փաստաթղթերի) հավաքագրում և բովանդակային վերլուծություն:

Տեղեկատվության հավաքագրում և բովանդակային վերլուծություն. Սույն հետազոտությունն իրականացնելիս հավաքագրվել և համախմբվել են Հայաստանի Հանրապետության 2005թ. և 2015թ. Մահմանադրությունները, վեջիններին հայեցակարգերը, կիրառելի օրենսդրությունը, ինչպես նաև սոցիալական իրավունքների բնագավառում միջազգային իրավական փաստաթղթերը և դրանց վերաբերյալ միջազգային մասնագիտացված կառույցների (մարմինների) մեկնաբանությունները, հետազոտական խնդրի վերաբերյալ առկա հետազոտությունները և մասնագիտական աշխատությունները: Այնուհետև համակարգային և համեմատական ձևով վերլուծվել է նշված փաստաթղթերի բովանդակությունը:

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§1.1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

Սոցիալական իրավունքները միջազգայնորեն ճանաչված և պաշտպանված են այնպիսի առանցքային միջազգային փաստաթղթերում, ինչպիսիք են հետևյալ ***ունիվերսալ փաստաթղթերը***՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948), Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագիրը (1966), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը (1966), Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (1989), Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (1966), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (1981), Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (2007), հետևյալ ***տարածաշրջանային փաստաթղթերը***՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (1950), վերջինիս առաջին արձանագրությունը (1952), Եվրոպական սոցիալական խարտիան (1961), Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան (1996), Հիմնարար իրավունքների մասին ԵՄ խարտիան (2009), Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիան (1969), վերջինիս առաջին արձանագրությունը մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին (Սան Մալվադորի արձանագրություն, 1988), Մարդու և ժողովուրդների իրավունքների մասին աֆրիկյան խարտիան (1981), վերջինիս արձանագրությունը՝ Աֆրիկայում կանանց իրավունքների մասին (2003), Երեխայի իրավունքների և բարօրության հիմքերի մասին աֆրիկյան խարտիան (1990):

Վերոնշյալ փաստաթղթերի բազմաթիվությունը մեզ հուշում է սոցիալական իրավունքների կարևորությունը և պետությունների կամքը՝ վերջինիս պաշտպանության ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու և պարբերաբար զարգացնելու այդ միջոցները:

Սոցիալական իրավունքների մասին խոսելիս կարևոր է հստակեցնել հետևյալ հիմնական հարցը՝ ***արդյո՞ք սոցիալական իրավունքներն անհատական (individual) իրավունքներ են:*** Պատասխանելով այս հարցին՝ նշենք, որ, այո՛, դրանք անհատական իրավունքներ են, որոնք պատկանում են յուրաքանչյուրին ծննդյան պահից¹: Սոցիալական իրավունքները երբեմն համարվում են կոլեկտիվ իրավունքներ, քանի որ որոշ դեպքերում կարող են վերաբերել անձանց որոշակի խմբերի (օրինակ՝ անձանց խմբային հարկադիր տարհանումների դեպքում), սակայն արդյունքում այդ իրավունքների խախտումից տուժում են անհատները, ուստի սոցիալական իրավունքներն ի վերջո անհատական իրավունքներ են:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել Մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի Գլխավոր հանձնակատարի մեկնաբանությունը սոցիալական իրավունքների՝ քաղաքական և քաղաքացիական իրավունքներից հիմնովին (ֆունդամենտալ) տարբերվելու վերաբերյալ, որը լույս է սփռում մի շարք վիճելի հարցերի վերաբերյալ: Այսպես՝ Գլխավոր հանձնակատարը մեկնաբանում է, որ նման տարբերակումն արհեստածին է և ի սկզբանե դատապարտված է անհաջողության: Ընդ որում, այս տարբերակումն ունի պատմական պատճառներ: Չնայած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը տարբերակում չի դնում իրավունքների միջև, այդ տարբերությունն ի հայտ եկավ սառը պատերազմի շրջանում Արևելքի և Արևմուտքի միջև հակասությունների սրման արդյունքում: Շուկայական տնտեսություն ունեցող արևմտյան

¹ St' u УПРАВЛЕНИЕ ВЕРХОВНОГО КОМИССАРА ОРГАНИЗАЦИИ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА, Часто задаваемые вопросы относительно экономических, социальных и культурных прав, Изложение фактов № 33, стр. 9:

երկրները ձգտում էին մեծ շեշտադրում կատարել քաղաքական և քաղաքացիական իրավունքների վրա այն դեպքում, երբ արևելյան երկրները ընդգծում էին տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կարևորությունը: Դա հանգեցրեց երկու տարբեր դաշնագրերի ընդունմանը. մեկը՝ **Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին**, մյուսը՝ **Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին**: Սակայն դրանից հետո այդ խիստ տարբերակումը մոռացվեց, և անցում կատարվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի օրիգինալ կառուցվածքին: Վերջին տասնամյակում մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերը, մասնավորապես Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան, ներառեցին բոլոր տեսակի իրավունքները:

Երկրորդ, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները մշտապես դիտարկվել են որպես իրավունքներ, որոնց իրականացման համար անհրաժեշտ էին մեծ ֆինանսական ներդրումներ այն դեպքում, երբ քաղաքական և քաղաքացիական իրավունքների իրականացման համար պետությունն ընդամենը պետք է գերծ մնա անձնական ազատությանը միջամտելու²:

Իրականում իրավունքների երկու խմբերի համար էլ անհրաժեշտ են և՛ ֆինանսական ներդրումներ, և՛ անձնական իրավունքներին և ազատություններին միջամտության բացառում:

Երրորդ, երբեմն պնդում են, որ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները քաղաքական և քաղաքացիական իրավունքների համեմատությամբ հանդիսանում են ավելի հեղհեղուկ և ոչ հստակ: Չնայած մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերում ոչ բոլոր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն են միատեսակ հստակ շարադրված, սակայն դա վերաբերում է նաև որոշ քաղաքական և քաղաքացիական իրավունքներին: Օրինակ՝ հետևյալ իրավունքների դեպքում³.

Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքներ	Քաղաքական և քաղաքացիական իրավունքներ
Մշակութային կյանքին մասնակցության իրավունք	Պետական գործերի կառավարմանը մասնակցելու իրավունք
Քաղցից զերծ լինելու իրավունք	Խոշտանգումներից կամ դաժան, անարդյալային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից և պատժից զերծ լինելու իրավունք

Ի վերջո, բոլոր իրավունքների իրացումը փոխկապակցված է, և մեկի խախտումը հանգեցնում է մեկ այլ իրավունքի կամ ազատության խախտման:

Խոսելով սոցիալական իրավունքների կարևորության մասին՝ անհրաժեշտ է հստակեցնել նաև այն հարցը, թե **ինչպիսին են պետության պարտավորությունները սոցիալական իրավունքների վերաբերյալ**:

Այսպես, սոցիալական իրավունքների ոլորտում պետության պարտավորությունները տարբեր միջազգային փաստաթղթերում տարբեր ծավալով են ամրագրված: Այսպես, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրում սահմանված է պետությունների պարտավորությունը՝ առկա միջոցների

² Տե՛ս УПРАВЛЕНИЕ ВЕРХОВНОГО КОМИССАРА ОРГАНИЗАЦИИ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА, Часто задаваемые вопросы относительно экономических, социальных и культурных прав, Изложение фактов № 33, стр. 11-12:

³ Տե՛ս նույն աշխատությունը, էջ 17:

առավելագույն սահմաններում «միջոցներ ձեռնարկել», որպեսզի աստիճանաբար ապահովվի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների լիարժեք իրացումը, ինչպես նաև երաշխավորել, որ տվյալ իրավունքները իրացվեն առանց որևէ խտրականության, ապահովել կանանց և տղամարդկանց կողմից իրավունքների հավասար իրացում և այլն:

Այլ միջազգային փաստաթղթերում և պետությունների սահմանադրություններում պետության պարտավորությունները ձևակերպված են այլ կերպ. նույնիսկ նախատեսված է պետության կողմից կոնկրետ գործողություններ ձեռնարկելու պարտավորություն, մասնավորապես՝ ընդունել համապատասխան օրենսդրություն կամ խրախուսել այդ իրավունքները պետական քաղաքականության մեջ:

Ինչպես քաղաքական և քաղաքացիական իրավունքները, սոցիալական իրավունքները ևս ենթադրում են պետության երեք տեսակի պարտավորություն՝ **հարգելու, պաշտպանելու և իրականացնելու**: Այս պարտավորություններից ցանկացածի ձախողումը ենթադրում է այդ իրավունքների խախտում: **Հարգելու պարտավորությունը** պահանջում է պետությունից ձեռնպահ մնալ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրացմանը միջամտելուց: Օրինակ, բնակարանային պայմանների իրավունքը պետության կողմից խախտվում է, երբ վերջինս մասնակցում է կամայական հարկադիր վերաբնակեցումներին: **Պաշտպանելու պարտավորությունը** պահանջում է պետությունից կանխարգելել նման խախտումները երրորդ անձանց կողմից: Օրինակ, մասնավոր գործատուների կողմից նվազագույն աշխատանքային ստանդարտներին համապատասխանությունը ապահովելու ձախողումը կարող է հանգեցնել աշխատանքի իրավունքի կամ աշխատանքի արդար և անվնաս պայմաններ ունենալու իրավունքների խախտման: **Իրականացնելու (ապահովելու) պարտավորությունը** պահանջում է պետությունից ձեռնարկել համապատասխան օրենսդրական, վարչական, բյուջետային, դատական և այլ միջոցներ տվյալ իրավունքների իրացման համար: Այսպես օրինակ, պետության ձախողումը կարիքն ունեցող անձանց առաջնային բժշկական ծառայությունների ապահովման հարցում կարող է հանգեցնել անձի առողջության պաշտպանության իրավունքի խախտման⁴:

Փաստորեն, սոցիալական իրավունքների բնագավառում պետության պարտավորությունները բաժանվում են երեք տեսակի՝ հարգել, պաշտպանել, իրականացնել⁵.

Հարգելու պարտավորություն	Պաշտպանելու պարտավորություն	Իրականացնելու պարտավորություն
Գոյություն ունեցող կենսապայմաններին չմիջամտելու պարտավորություն	Ոչ պետական դերակատարների գործունեությունը վերահսկելու նպատակով միջամտելու պարտավորություն	Իրավունքի ամբողջական իրացման համար ակտիվ գործողություններ ձեռնարկելու պարտավորություն
Խտրականության արգելք		

Օրինակ՝ **աշխատանքի իրավունքի** ռաբրտում պետության պարտավորությունների շրջանակն ունի հետևյալ տեսքը⁶.

Հարգել	Պետությունը չպետք է օգտագործի հարկադիր աշխատանք կամ մերժի քաղաքական ընդդիմադիրներին աշխատանքի
---------------	---

⁴ Տե՛ս Economic, Social and Cultural Rights as Human Rights: An Introduction, Olivier De Schutter, CRIDHO Working Paper 2013/2, page 6.

⁵ Տե՛ս նույն աշխատությունը, էջ 6:

⁶ Տե՛ս նույն աշխատությունը, էջ 6-7:

	հնարավորություններում
Պաշտպանել	Պետությունը պետք է ապահովի, որպեսզի գործատուները ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ոլորտներում վճարեն նվազագույն աշխատավարձ
Իրականացնել	Պետությունը պետք է խրախուսի աշխատանքի իրավունքից օգտվելը, օրինակ՝ հանրությանը այդ իրավունքին ծանոթացնելու նպատակով կրթական և տեղեկատվական ծրագրերի իրականացման միջոցով

Պետության պարտավորությունների ծավալի և դրանց իրացման ժամկետների համար կարևոր է պարզել, թե ինչ է նշանակում **սոցիալական «իրավունքների աստիճանական իրականացում» հասկացությունը**:

«Աստիճանական իրականացում» հասկացությունը գործածվում է սոցիալական իրավունքների ոլորտում պետության պարտավորությունների գլխավոր մասի բնորոշման համար: Իր էությանմբ դա պետության պարտավորությունն է գոյություն ունեցող ռեսուրսների առավելագույն չափով միջոցներ ձեռնարկել, որպեսզի ապահովվի սոցիալական իրավունքների լիակատար իրացումը: Նշված հասկացությունը նշանակում է, որ պետության կողմից տվյալ պարտավորության իրականացումը կապվում է նաև պետության ֆինանսական կամ այլ միջոցների առկայության հետ, ուստի պետությունների մեծ մասն իրենց սահմանադրություններում նախատեսում է որոշ սոցիալական իրավունքների աստիճանական իրականացում:

Երբեմն կարող է սխալմամբ այնպիսի մեկնաբանություն կատարվել, թե պետությունը պարտավոր չէ պաշտպանել սոցիալական իրավունքները, քանի դեռ բավարար ֆինանսական միջոցներ չի կուտակել: Սակայն միջազգային պայմանագրերը, ընդհակառակը, անմիջական պարտավորություններ են նախատեսում՝ ձեռնարկելու համապատասխան միջոցներ սոցիալական իրավունքների լիակատար իրականացման համար: **Ռեսուրսների անբավարարությունը չի կարող արդարացնել պարտավորությունների կատարման ուղղությամբ անգործությունը կամ տվյալ իրավունքների իրականացման միջոցների անորոշ ժամկետով հետաձգումը:** Պետությունը պետք է ցույց տա, որ ձեռնարկում է բոլոր ջանքերը սոցիալական իրավունքների իրացման կատարելագործման համար նույնիսկ այնպիսի դեպքերում, երբ ռեսուրսները սակավ են: Օրինակ, պետությունը պետք է առաջնահերթության կարգով միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու յուրաքանչյուրի հասանելիությունը նվազագույն իրավունքների մակարդակին և չբավորների, մարզինալացված և անապահով խմբերի պաշտպանության նպատակային ծրագրերին⁷:

Անհրաժեշտ է քննարկել նաև այն հարցը, թե **սոցիալական իրավունքների վերաբերյալ որ պարտավորությունները պետք է իրականացվեն անհապաղ**:

Չնայած այն հանգամանքին, որ պետությունը կարող է սոցիալական իրավունքներն ապահովել աստիճանաբար, այն պետք է նաև ձեռնարկի անհապաղ միջոցներ անկախ իր ունեցած ռեսուրսներից՝ հետևյալ հինգ ոլորտներում.

1. Խտրականության բացառում. Պետությունը պետք է անհապաղ արգելի խտրականությունն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը և կրթությունը, ինչպես նաև աշխատավայրում խտրականությունը: Ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների և այլ հիմքերով խտրականությունը պետք է արգելվի:

⁷ St 'u УПРАВЛЕНИЕ ВЕРХОВНОГО КОМИССАРА ОРГАНИЗАЦИИ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА, Часто задаваемые вопросы относительно экономических, социальных и культурных прав, Изложение фактов № 33, стр. 14-18:

2. Սոցիալական իրավունքները, որոնք չեն կարող աստիճանաբար իրականացվել.

Որոշ սոցիալական իրավունքների իրականացման համար չեն պահանջվում զգալի ռեսուրսներ: Օրինակ՝ արհմիությունների ստեղծման կամ դրանց անդամակցելու իրավունքը, գործադուլի իրավունքը, երեխաներին և երիտասարդներին տնտեսական և սոցիալական չարաշահումից պաշտպանելու իրավունքը, միևնույն աշխատանքի համար հավասար վարձատրության իրավունքը:

Մի շարք այլ իրավունքների դեպքում պետությունը, չնայած չպետք է անհապաղ ապահովի դրանց իրացումը, սակայն երկու տարվա ընթացքում պետք է մշակի և ներկայացնի մանրամասն ծրագիր տվյալ իրավունքների իրացման ապահովման համար:

3. «Միջոցներ ձեռնարկելու» պարտավորությունը. Նույնիսկ աստիճանաբար միջոցներ ձեռնարկելու պարտավորության շրջանակներում պետությունը պետք է մշտական ջանքեր գործադրի սոցիալական իրավունքների իրացման զարգացման համար: Դա նշանակում է, որ չնայած դրանց ամբողջական իրացումը կարող է ձեռք բերվել աստիճանական, սակայն դրան ուղղված միջոցները պետք է ձեռնարկվեն ողջամիտ ժամկետներում. այդ միջոցները պետք է լինեն *մտածված, կոնկրետ* և, որքան հնարավոր է, *նպատակային*, նախատեսեն բոլոր համապատասխան միջոցների օգտագործում, ներառյալ, ի թիվս այլի, օրենսդրական միջոցների ընդունումը:

Աստիճանական իրականացմանն ուղղված միջոցներ են ստորև նշվածները.

- Սոցիալական իրավունքներից օգտվելու վիճակի գնահատում, ներառյալ համապատասխան ձևով տարանջատված տվյալների հավաքագրման և գնահատման համարժեք մեխանիզմների ներդրում;
- Ռազմավարությունների և ծրագրերի ձևավորում, ցուցանիշների և նպատակային առաջադրանքների ժամկետների ներդրում, որոնք պետք է լինեն իրատեսական, իրականանալի և նախատեսված լինեն այդ իրավունքների իրացման առաջընթացի գնահատման համար;
- Անհրաժեշտ օրենքների և քաղաքականության ընդունում, ինչպես նաև համարժեք միջոցների տրամադրում ծրագրերի և ռազմավարությունների կյանքի կոչման համար;
- Պարբերական մշտադիտարկում և առաջընթացի գնահատում, որը ձեռք է բերվել ծրագրերի և ռազմավարությունների իրականացման մեջ;
- Բողոքարկման մեխանիզմների ստեղծում, որպեսզի անձինք կարողանան բողոքներ ներկայացնել, եթե պետությունը չի իրականացնում իր պարտականությունները:

4. Ոչ ռեգրեսիվ միջոցներ. Պետությունը չպետք է թույլ տա սոցիալական իրավունքների պաշտպանության գոյություն ունեցող վիճակի վատթարացում, եթե միայն գոյություն չունեն ծանրակշիռ հիմնավորումներ ռեգրեսիվ միջոցների համար:

5. Նվազագույն հիմնական պարտավորություններ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի համաձայն՝ գոյություն ունեն պարտավորություններ, որոնք համարվում են անմիջապես ուժի մեջ մտնող, որպեսզի ապահովեն *յուրաքանչյուր իրավունքի իրացման նվազագույն բազային մակարդակ*: Դրանք կոչվում են *նվազագույն հիմնական պարտավորություններ*: Եթե պետությունը չի ապահովում դրանք ռեսուրսների բացակայության պատճառով, ապա պետք է ներկայացնի, որ այդ հիմնական պարտավորությունների առաջնահերթության կարգով իրականացման համար գործադրել է բոլոր ջանքերը առկա ռեսուրսների օգտագործման համար:

Հիմնական նվազագույն պարտավորությունների օրինակներ են⁸

⁸ St´u УПРАВЛЕНИЕ ВЕРХОВНОГО КОМИССАРА ОРГАНИЗАЦИИ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА, Часто задаваемые вопросы относительно экономических, социальных и культурных прав, Изложение фактов № 33, стр. 27-28:

- ❖ Ապահովել զբաղվածության հասանելիություն, հատկապես այն անձանց համար, ովքեր գտնվում են ոչ բարենպաստ և ծայրահեղ վիճակում, որպեսզի նրանք հնարավորություն ունենան ապրելու արժանապատիվ;
- ❖ Ապահովել նվազագույն բազային սննդի հասանելիություն, որը համարժեք է համարվում սննդային արժեքի և անվտանգության տեսանկյունից՝ նպատակ ունենալով ապահովել յուրաքանչյուր անձի՝ քաղցից զերծ լինելու իրավունքը;
- ❖ Ապահովել հասանելիություն բազային բնակարանի և սանիտարահիգիենիկ ծառայություններին, և անվտանգ խմելու ջրի համարժեք ապահովում;
- ❖ Ապահովել հիմնական դեղորայքով, որոնք սահմանված են Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ Հիմնական դեղորայքի վերաբերյալ գործողությունների ծրագրում;
- ❖ Ապահովել անվճար նախնական կրթություն բոլորի համար;
- ❖ Ապահովել սոցիալական ապահովության ծրագրերի հասանելիություն, որոնք երաշխավորում են նպաստների անհրաժեշտ նվազագույն մակարդակ, որոնք ծածկում են հիմնական բժշկական ծառայությունների, նվազագույն ապաստանի և բնակարանի, ջրամատակարարման և սանիտարական պայմանների, սննդամթերքի և նվազագույն կրթության ծախսերը:

Ի վերջո, սոցիալական իրավունքների իրականացումն ապահովելու և կարևորությունը գնահատելու համար էական են նաև հետևյալ հարցերը՝ **ո՞ր մարմինն են ընդդատյա սոցիալական իրավունքի խախտումները, արդյո՞ք դրանք ենթակա են դատական կարգով պաշտպանության:**

Դատական կարգով անձի իրավունքների պաշտպանությունն ունի հիմնարար նշանակություն, քանի որ այս կամ այն իրավունքի՝ դատական կարգով պաշտպանության հնարավորության բացակայությունը կասկածի տակ է դնում իրավունքի գոյության փաստը:

Իրավունքի դատական կարգով պաշտպանության հնարավորությունը նպաստում է այդ իրավունքների մասին մեր պատկերացումների խորացմանը, իրավական պաշտպանության միջոցների տրամադրմանը այն դեպքերում, երբ տեղի է ունենում այդ իրավունքների ակնհայտ խախտում, ինչպես նաև այնպիսի օրինակելի որոշումների ընդունում, որոնք հետագայում կարող են նպաստել նմանատիպ խախտումների վերացմանը (կանխարգելմանը) և համակարգային փոփոխությունների իրականացմանը:

Մեր երկրում սոցիալական իրավունքների խախտումների գործերը ենթակա են քննության ինչպես իրավասու պետական (վարչական) մարմինների, ընդհանուր իրավասության դատարանների, այնպես էլ Սահմանադրական դատարանի կողմից՝ յուրաքանչյուրը Սահմանադրությամբ կամ օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

Ինչ վերաբերում է սոցիալական իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային կառույցներին, ապա դրանց մասին կխոսենք ստորև:

§1.2. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՂՀՐԴԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՐՏԻԱ

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան (այսուհետ նաև՝ Խարտիա) Եվրոպայի խորհրդի հիմնարար փաստաթղթերից է, որը սոցիալական իրավունքների վերաբերյալ միջազգային ստանդարտների և պետությունների կողմից դրանց կատարման մշտադիտարկման մեխանիզմների համախումբ է: Խարտիան նաև անվանվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) «սոցիալական գործընկեր»⁹: Այս կոնվենցիոն համակարգը ներառում է հետևյալը՝

- Երաշխավորում է մեծ ծավալի մարդու իրավունքներ՝ հաշվի առնելով աշխատանքի և աշխատանքային պայմանների, բնակարանային պայմանների, կրթական, առողջապահական, բժշկական օգնության և սոցիալական ապահովության հետ կապված ամենօրյա հիմնական կարիքները:
- Պարունակում է յուրահատուկ շեշտադրում խոցելի անձանց նկատմամբ, ինչպես օրինակ տարիքով մարդիկ, երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք և միգրանտները: Այն պահանջում է վերոնշյալ իրավունքների իրացման երաշխավորում առանց խտրականության:
- Նպատակն է կիրառել ՄԱԿ-ի 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը Եվրոպայի սահմաններում. այդ նպատակով կապված է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոնվենցիոն համակարգի և Եվրոպական միության Հիմնարար իրավունքների խարտիայի հետ:

Խարտիայի համաձայն՝ պետությունների հավատարմությունն իրենց պարտավորություններին գտնվում է Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողովի (Հանձնաժողով) միջազգային հսկողության ներքո: Հանձնաժողովը բաղկացած է տասնհինգ անկախ անդամներից, ովքեր ընտրվում են Եվրոպայի խորհրդի նախարարների կողմից վեց տարի ժամկետով, մեկ անգամ վերընտրման հնարավորությամբ:

Հանձնաժողովն իրականացնում է Խարտիայի դրույթներին համապատասխանության հսկողությունը երկու տարբեր ընթացակարգերի միջոցով. **հաշվետվողական ընթացակարգ**, որով անդամ պետությունները ներկայացնում են պարբերական ազգային զեկույցներ, և **կոլեկտիվ բողոքների ներկայացման ընթացակարգ**, որը գործում է գործատուի կամ աշխատողների կազմակերպությունների, կամ ոչ առևտրային (հասարակական) կազմակերպությունների կողմից բողոքների հիման վրա:

Խարտիայի և դրանով սահմանված իրավունքների վերաբերյալ կարևոր և հատկանշական է այն փաստը, որ **Խարտիան մեկնաբանվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, ինչպես նաև համապատասխան այլ կոնվենցիոն փաստաթղթերի լույսի ներքո, որոնք կիրառելի են Խարտիայով երաշխավորված իրավունքների նկատմամբ, ինչպես նաև այդ կոնվենցիաներին վերջիններիս մշտադիտարկման մարմինների կողմից տրված մեկնաբանությունների ներքո**¹⁰:

⁹ St 'u FUNDAMENTAL SOCIAL RIGHTS IN EUROPE, EUROPEAN PARLIAMENT, Directorate General for Research, WORKING PAPER, 2-2000, page 10.

¹⁰ St 'u European committee of social rights, The relationship between European Union law and the European Social Charter, Working Document, 15 July 2014, pages 5-6.

Այսպես, Եվրոպական սոցիալական խարտիան՝ որպես սոցիալական իրավունքների վերաբերյալ առավել «հատուկ» իրավական ակտ, սահմանում է թվով 31 իրավունքներ և սկզբունքներ, որոնց ապահովման համար պետությունները պետք է համապատասխան պայմաններ ապահովեն: Խարտիան նախատեսում է, որ վավերացնող պետությունը պետք է ընդունի Խարտիայի 2-րդ գլխի հոդվածներով նախատեսված ինը պարտավորություններից առնվազն վեցը, իսկ պետության ընդհանուր պարտավորությունների թիվը չպետք է պակաս լինի 16 հոդվածներով և 63 պարագրաֆներով սահմանվածներից:

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Խարտիան, պարտավորվել է պաշտպանել և ապահովել հետևյալ իրավունքները.

1. Աշխատանքի իրավունքը (1-ին հոդված),
2. Կազմակերպելու իրավունքը (5-րդ հոդված),
3. Կոլեկտիվ գործարքների կնքման իրավունքը (6-րդ հոդված),
4. Երեխաների և երիտասարդների պաշտպանվածության իրավունքը (7-րդ հոդված),
5. Աշխատող կանանց մայրության պաշտպանվածության իրավունքը (8-րդ հոդված),
6. Երեխաների և երիտասարդների սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածության իրավունքը (17-րդ հոդված),
7. Մյուս Կողմերի տարածքներում վճարովի աշխատանքով զբաղվելու իրավունքը (18-րդ հոդված),
8. Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների պաշտպանվածության և օգնություն ստանալու իրավունքը (19-րդ հոդված),
9. Առանց սեռական խտրականության՝ աշխատանքի և մասնագիտական հարցերում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը (20-րդ հոդված),
10. Աշխատանքային պայմանների և աշխատանքային միջավայրի սահմանմանը և բարելավմանը մասնակցելու իրավունքը (22-րդ հոդված),
11. Աշխատանքից ազատելու դեպքերում պաշտպանվածության իրավունքը (24-րդ հոդված),
12. Ձեռնարկությունում և նրանց տրամադրվելիք մեխանիզմներում աշխատողների ներկայացուցիչների պաշտպանվածության իրավունքը (28-րդ հոդված):

Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտավորություններ նաև Խարտիայով երաշխավորված մի շարք այլ իրավունքների, այսպես ասած, մասնակի ապահովման վերաբերյալ, որոնք հետևյալն են՝

- **Աշխատանքի արդար պայմանների իրավունք** (2-րդ հոդվածի 1, 2, 3, 4, 5-րդ և 6-րդ կետեր),
- **Անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքը** (3-րդ հոդվածի 1-ին կետ),
- **Արդարացի վարձատրման իրավունքը** (4-րդ հոդվածի 2, 3, 4-րդ և 5-րդ կետեր),
- **Սոցիալական ապահովության իրավունքը** (12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետեր),
- **Բժշկական և սոցիալական օգնության իրավունքը** (13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր),
- **Սոցիալական ապահովության ծառայություններից օգտվելու իրավունքը** (14-րդ հոդվածի 2-րդ կետ),
- **Հաշմանդամների անկախության, սոցիալական ինտեգրման և համայնքի կյանքում մասնակցության իրավունքը** (15-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետեր):

Խարտիայի տեքստի, հատկապես նախաբանի բառացի մեկնաբանությունից պարզ է դառնում ՀՀ գործող Սահմանադրության տեքստի շարադրանքի պատճառը. Խարտիան ևս սահմանում է, որ դրանով սահմանված իրավունքների և սկզբունքների արդյունավետ իրականացմանը *նպաստելը և պայմաններ ձեռք բերելը պետության քաղաքականության նպատակ է*, որը պետք է ձեռք բերվի բոլոր համապատասխան ազգային և միջազգային

միջոցներ¹¹ : Խարտիայում գործածված տերմինաբանության և դրանց իրավական իմաստի մասով բավական է միայն ընդգծել, որ մեջբերված ոճը բնորոշ է գրեթե բոլոր միջազգային փաստաթղթերին՝ պայմանավորված տվյալ փաստաթղթերին միանալու և/կամ դրանք վավերացնելու՝ պետության կամահայտնությամբ, իր սուվերենությանը (ինքնիշխանությանը) միջազգային կառույցների որոշակի միջամտություն թույլատրելու «համաձայնությամբ»։ Ի վերջո, ցանկացած միջազգային փաստաթղթի վավերացում դրանով սահմանված կոնկրետ պարտավորության(ների) ստանձնման փաստով նշանակում է, որ այն պահից, երբ պետությունը ստանձնեց այս կամ այն պարտավորությունը, այն դառնում է վերջնական և պարտադիր կատարման ենթակա վերջինիս կողմից¹²:

Հետևաբար, Հայաստանի Հանրապետության կողմից Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով ստանձնած պարտավորությունները աստիճանաբար, քայլ առ քայլ պետք է կատարվեն պետության կողմից՝ ձգտելով սոցիալական ապահովության առավել ամբողջական համակարգի ձևավորման և իրավունքների ապահովման:

¹¹ Տե՛ս Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, մաս 1-ին:

¹² Տե՛ս European committee of social rights, The relationship between European Union law and the European Social Charter, 15 July 2014, page 4.

§1.3. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Սոցիալական իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի զգալի մասը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումից հետո պատկանում է Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիոն համակարգին և նախաձեռնությանը:

Սույն հետազոտության նպատակների տեսանկյունից մեզ համար հետաքրքրական են հատկապես **Քաղաքական և քաղաքացիական իրավունքների դաշնագիրը** (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվել է 1966 թվականին, ուժի մեջ է 1976 թվականից) և **Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների դաշնագիրը** (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվել է 1966 թվականին):

Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագիրը քննարկենք հիմնականում սոցիալական իրավունքների մասով: Այսպես՝ դաշնագիրը սահմանում է հարկադիր կամ պարտադիր աշխատանքի արգելքը, արհմիություններ ստեղծելու իրավունքը, ընտանիքի, երեխայի պաշտպանությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, խտրականության արգելքը՝ անկախ որևէ հիմքից, կանանց և տղամարդկանց հավասարությունը և այլ իրավունքներ:

Սույն դաշնագրով սահմանված իրավունքների ապահովմանը և պաշտպանությանը, ինչպես նաև դաշնագրային պարտավորությունների կատարմանը հետևելու համար ստեղծվել է Մարդու իրավունքների կոմիտե՝ կազմված տասնութ անդամներից, որը կատարում է դաշնագրով նախատեսված ֆունկցիաները:

Բացի այդ, դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են զեկույցներ ներկայացնել սույն դաշնագրով ճանաչվող իրավունքների կենսագործման ուղղությամբ իրենց կողմից ձեռնարկված միջոցների մասին և այդ իրավունքների իրացման բնագավառում ձեռք բերված առաջադիմության մասին:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի համաձայն՝ սույն դաշնագրին մասնակցող յուրաքանչյուր պետություն *պարտավոր է* անհատական կարգով և միջազգային օգնության ու համագործակցության կարգով, մասնավորապես տնտեսական և տեխնիկական բնագավառներում եղած ռեսուրսների առավելագույն սահմաններում միջոցներ ձեռնարկել, որպեսզի աստիճանաբար, բոլոր հարկ եղած եղանակներով, ներառյալ, մասնավորապես, օրենսդրական միջոցների ընդունումը, ապահովի մարդու՝ սույն դաշնագրում ճանաչվող իրավունքների *լրիվ իրականացումը*: Մեջբերված դրույթից առանձնացնենք մեզ հետաքրքրող սկզբունքային դատողությունները. **առաջին**՝ դաշնագրին միացող պետությունը *պարտավոր է* բոլոր հնարավոր, այդ թվում օրենսդրական միջոցներ ձեռնարկել, որպեսզի ապահովի դաշնագրային պարտավորությունների կատարումը (մարդու իրավունքների ապահովումը), և **երկրորդ**՝ պետք է ձգտի ապահովել դաշնագրով սահմանված իրավունքների *լրիվ իրականացումը*:

Այսպես, դաշնագրի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են աշխատանքի իրավունքը, որն իր մեջ ներառում է յուրաքանչյուր մարդու իրավունքը՝ իր ապրուստի համար աշխատանքով վաստակելու հնարավորություն ստանալը, որը նա ազատորեն ընտրում է կամ որին նա ազատորեն համաձայնում է, և կձեռնարկեն հարկ եղած քայլեր այդ իրավունքի ապահովման համար:»:

Դաշնագիրը նաև սահմանում է աշխատանքի արդար և նպաստավոր պայմաններ ունենալու յուրաքանչյուրի իրավունքը, աշխատանքի արդար և հավասար վարձատրության, գործադուլի, արհեստակցական միություններ ստեղծելու (դրանց անդամակցելու), բավարար կենսապայմանների իրավունքը, ընտանիքի և մայրության

պաշտպանությունը, ֆիզիկական և հոգեկան առողջության իրավունքը, կրթության իրավունքը: Այսինքն՝ դաշնագիրն ամրագրում և պաշտպանում է մեզ հայտնի բոլոր սոցիալական իրավունքները:

Որպես դաշնագրային պարտավորությունների և դրույթների կատարումն ապահովելու երաշխիք՝ դաշնագրով սահմանված է, որ Տնտեսական և Սոցիալական խորհուրդը կարող է միավորված ազգերի կազմակերպության մյուս մարմինների, նրանց օժանդակ մարմինների և տեխնիկական օգնության տրամադրման գործով զբաղվող մասնագիտական հիմնարկների ուշադրությունը հրավիրել դաշնագրի համապատասխան մասում հիշատակված զեկույցների կապակցությամբ առաջացող ցանկացած հարցերի վրա, որոնք կարող են այդ մարմիններին օգտակար լինել իրենց իրավասության սահմաններում միջազգային այն միջոցների նպատակահարմարության վերաբերյալ նրանցից յուրաքանչյուրի կողմից որոշումներ ընդունելիս, որոնք կարող էին նպաստել դաշնագրի աստիճանական արդյունավետ կենսագործմանը:

Հայաստանի Հանրապետությունը միացել է դաշնագրին 1993 թվականին: Նշանակում է՝ 1993 թվականից սկսած մեր պետությունը փորձում է և այսուհետ մշտապես է պետք է ձգտի ապահովել դաշնագրով սահմանված մարդու իրավունքները:

1.3.1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում ստեղծված և սոցիալական իրավունքների պաշտպանության և ապահովման ոլորտում գործող մասնագիտացված կառույց է Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (գործում է 1919 թվականից, այսուհետ նաև՝ ԱՄԿ): Վերջինիս կողմից ընդունված փաստաթղթերը էական նշանակություն ունեն սոցիալական իրավունքների թիրախային կարգավորման և պետությունների պարտավորությունների հստակեցման հարցում:

ԱՄԿ կիրառելի կոնվենցիաների և դրանց վերաբերյալ մեկնաբանությունների համախմբման արդյունքում անհրաժեշտ ենք համարում առանձնացնել ստորև նշված սկզբունքային դրույթները և սոցիալական ապահովության իրավունքի բաղկացուցիչ տարրերը: Չնայած սոցիալական ապահովության տարրերը կարող են տարբերվել կախված տարբեր պայմաններից, հիմնական գործոնները վերաբերում են ստորև նշված բոլոր իրավիճակներին: Այս գործոնները մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ սոցիալական ապահովությանը պետք է վերաբերվել որպես **սոցիալական բարիքի**, ոչ թե որպես ընդամենը տնտեսական կամ ֆինանսական քաղաքականության գործիքի: Ստորև ներկայացված սկզբունքային դատողությունները և մեկնաբանություններն ուղենիշային են նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակության հստակեցման և սահմանադրական նորմերի մեկնաբանման տեսանկյունից:

Այսպես՝ ԱՄԿ կոնվենցիոն փաստաթղթերի հիման վրա Կոնվենցիաների և առաջարկությունների կատարման փորձագետների հանձնաժողովի (Committee of Experts on the Application of Conventions and Recommendations (CEACR), այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից կազմված Ընդհանուր մեկնաբանությունների (General comments) համաձայն՝ սոցիալական իրավունքների ոլորտում պետության քաղաքականությունը պետք է ապահովի հետևյալ սկզբունքների պահպանումը և կիրառումը:

1. Հասանելիություն - սոցիալական ապահովության համակարգ

Սոցիալական ապահովության իրավունքի իրացման համար պահանջվում է, որպեսզի համակարգը, կազմված մեկ կամ բազմաթիվ սխեմաներից, հասանելի լինի և տեղում ապահովի, որպեսզի արտոնությունները տրամադրվեն համապատասխան սոցիալական ռիսկերի դեպքում և կատեգորիաներին: Համակարգը պետք է հիմնված լինի ներպետական օրենսդրության հիման վրա, և հանրային իշխանությունները պետք է պատասխանատվություն կրեն համակարգի արդյունավետ կառավարման կամ ղեկավարման համար: Մեխանիզմները պետք է նաև լինեն կայուն, ներառյալ այնպիսիք, որոնք վերաբերում են կենսաթոշակների տրամադրմանը, որպեսզի ապահովեն, որ իրավունքը իրացվի ներկայիս և ապագա սերունդների համար:

2. Սոցիալական ռիսկեր և ճգնաժամեր

Սոցիալական ապահովության համակարգը պետք է ապահովի սոցիալական ապահովության՝ ստորև նշված ինը սկզբունքային ճյուղերի ծածկույթ¹³:

ա) Առողջապահություն

Մասնակից պետությունները պարտավորություն ունեն երաշխավորելու, որ առողջապահական համակարգերը բոլորին համարժեք հասանելիություն ունենան¹⁴:

¹³ Տե՛ս ԱՄԿ 102-րդ կոնվենցիան (1952) Սոցիալական ապահովության (նվազագույն ստանդարտների) մասին, նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW), հոդվածներ 11, 12 and 13:

¹⁴ Գլխավոր մեկնաբանություն թիվ 14 (2000) առողջության առավելագույն հասանելի մակարդակի իրավունքի մասին (հոդված 12):

Այն դեպքերում, երբ առողջապահական համակարգը նախատեսում է մասնավոր կամ խառը ծրագրեր, նման ծրագրերը պետք է լինեն մատչելի, թիվ 14 (2000) Ընդհանուր մեկնաբանության մեջ նշված հիմնական տարրերին համապատասխան:

բ) Հիվանդություն

Դրամական արտոնությունները պետք է տրամադրվեն նրանց, ովքեր անաշխատունակ են վատառողջության պատճառով՝ փոխհատուցելու եկամուտների բացակայության ժամանակահատվածը: Անձինք, ովքեր տառապում են երկարաժամկետ հիվանդությամբ, պետք է ստանան հաշմանդամության արտոնություններ:

գ) Ծերություն

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ՝ հիմնելու սոցիալական ապահովության համակարգեր, որոնք տրամադրում են արտոնություններ տարիքով անձանց՝ ազգային օրենքով նախատեսված որոշակի տարիքից սկսած¹⁵:

Հանձնաժողովը շեշտում է, որ մասնակից պետությունները պետք է սահմանեն կենսաթոշակի անցնելու տարիք, որը ներառում է, ի թիվս այլի, զբաղվածության էությունը, մասնավորապես աշխատանքը վտանգավոր պայմաններում և ծեր մարդկանց աշխատելու հնարավորությունները: Մասնակից պետությունները պետք է հասանելի ռեսուրսների հնարավորությունների սահմաններում տրամադրեն ծերության ոչ ներդրումային արտոնություններ, սոցիալական ծառայություններ և այլ աջակցություն բոլոր այն անձանց, ովքեր, հասնելով ազգային օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակային տարիքի, չեն ավարտել ներդրումների անհրաժեշտ ժամանակահատվածը կամ որևէ այլ կերպ իրավունք չունեն ծերության ապահովագրական կենսաթոշակի կամ այլ սոցիալական ապահովության արտոնության կամ աջակցության, և չունեն եկամտի այլ աղբյուր:

դ) Գործազրկություն

Ի լրումն ամբողջական, արդյունավետ և ազատորեն ընտրված աշխատանքի (զբաղվածության), մասնակից պետությունները պետք է ջանան ապահովել արտոնություններ՝ փոխհատուցելու եկամուտների կորուստը կամ պակասը՝ կապված համապատասխան աշխատանքը կատարելու անկարողության հետ: Աշխատանքը կորցնելու դեպքում արտոնություններ պետք է վճարվեն համարժեք ժամանակահատվածի համար, և տվյալ ժամանակահատվածի ավարտին սոցիալական ապահովության համակարգը պետք է ապահովի գործազուրկ անձի պաշտպանությունը, օրինակ սոցիալական աջակցության միջոցով: Սոցիալական ապահովության համակարգը պետք է աջակցի նաև այլ աշխատողներին, ներառյալ ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատողներին, ժամանակավոր աշխատողներին, սեզոնային աշխատողներին և ինքնազբաղվածներին, և նրանց, ովքեր աշխատում են ոչ ֆորմալ տնտեսության արտատվոր պայմաններում: Արտոնությունները պետք է տրամադրվեն հատուցելու եկամուտների բացակայությունը այն անձանց համար, ովքեր հարկադրված չեն աշխատում հանրային առողջության հետ կապված կամ այլ արտակարգ պայմաններում:

ե) Աշխատանքային խեղում

Մասնակից պետությունները նաև ապահովում են աշխատողների պաշտպանությունը, ովքեր աշխատանքի կամ արտադրության ընթացքում վնասվածք են ստացել: Սոցիալական ապահովության համակարգերը պետք է ծածկեն խեղման կամ հիվանդագին վիճակի արդյունքում առաջացած ծախսերը և կորցրած եկամուտը, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով տուժած ամուսինների կամ խնամարկյալների աջակցության կորուստ ¹⁶ : Համարժեք արտոնություններ պետք է տրամադրվեն առողջապահության հասանելիության և դրամական օգնությունների տեսքով՝

¹⁵ Տե՛ս Գլխավոր մեկնաբանություն թիվ 6 (1995)՝ տարեց անձանց տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին:

¹⁶ Տե՛ս ԱՄԿ թիվ 121 կոնվենցիան (1964) Աշխատանքային խեղումների դեպքում արտոնությունների մասին:

ապահովելու եկամտի առկայությունը: Արտոնությունները չպետք է տրամադրվեն զբաղվածության, ապահովագրության կամ ավանդների (ներդրումների) վճարման ընթացքում:

զ) Ընտանիքի և երեխայի աջակցություն

Ընտանիքների համար արտոնությունները էական նշանակություն ունեն Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի (այսուհետ նաև՝ Դաշնագիր) 9-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված երեխաների և չափահաս խնամարկյալների իրավունքների իրացման համար: Արտոնություններ տրամադրելիս մասնակից պետությունը պետք է հաշվի առնի նաև այն անձանց ռեսուրսները և այլ պայմանները, ովքեր պարտավորություն ունեն երեխայի կամ չափահաս խնամարկյալի խնամքի համար, ինչպես նաև ցանկացած այլ պայման¹⁷: Ընտանեկան և երեխաների արտոնությունները, ներառյալ դրամական արտոնությունները և սոցիալական ծառայությունները, պետք է տրամադրվեն ընտանիքներին՝ առանց խտրականության և պետք է սովորաբար ներառեն սննդամթերք, հագուստ, բնակարանային պայմաններ, ջուր և սանիտարական պայմաններ, այլ համապատասխան իրավունքներ:

է) Մայրություն

Դաշնագրի 10-րդ հոդվածը հստակորեն սահմանում է, որ «աշխատող մայրերին պետք է տրամադրվի վճարովի արձակուրդ կամ համարժեք սոցիալական ապահովության արտոնություններով արձակուրդ»¹⁸: Վճարովի մայրության արձակուրդը պետք է տրամադրվի բոլոր կանանց, ներառյալ նրանց, ովքեր ներգրավված են արտակարգ պայմաններում աշխատանքի, իսկ արտոնությունները պետք է տրամադրվեն համարժեք ժամանակահատվածի համար¹⁹: Պատշաճ բժշկական արտոնությունները կանանց և երեխաներին, ներառյալ նախածննդյան, ծննդաբերության և հետծննդյան խնամք, նաև հիվանդանոցային խնամք՝ ըստ անհրաժեշտության:

ը) Հաշմանդամություն

Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ 1994թ. թիվ 5 Ընդհանուր մեկնաբանությունում Հանձնաժողովն ընդգծել է հաշմանդամություն ունեցող անձանց համարժեք եկամուտների տրամադրման կարևորությունը, անձանց, ովքեր ունենալով հաշմանդամություն կամ հաշմանդամության հետ կապված գործոններ, ժամանակավորապես կորցրել են, կամ նվազել է նրանց եկամուտը, մերժվել են աշխատանքային հնարավորություններից կամ ունեն մշտական հաշմանդամություն: Նման օժանդակությունը պետք է տրամադրվի արժանապատիվ ձևով և արտացոլի հատուկ կարիքներին աջակցությունը և հաշմանդամության հետ կապված այլ ծախսերը: Աջակցությունը պետք է ներառի ընտանիքի անդամներին և այլ ոչ ֆորմալ խնամակալներին:

թ) Ողջ մնացածներ և որբեր

Մասնակից պետությունները պետք է ապահովեն արտոնությունների տրամադրումը նաև կերակրողին կորցրած ողջ մնացածներին և որբերին, ովքեր ունեն սոցիալական ապահովության կամ կենսաթոշակի իրավունք²⁰: Արտոնությունները պետք է ներառեն հուղարկավորության ծախսերը, մասնավորապես այն մասնակից պետություններում, որտեղ հուղարկավորության ծախսերը արգելված չեն: Ողջ մնացածները կամ որբերը չպետք է բացառվեն սոցիալական ապահովության համակարգից խտրականության արգելված հիմքերով և նրանց պետք է տրամադրվի աջակցություն սոցիալական ապահովության համակարգից օգտվելիս, մասնավորապես

¹⁷ Տե՛ս Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 26:

¹⁸ Հանձնաժողովը նշում է, որ ԱՄԿ թիվ 183 կոնվենցիան (2000) Մայրության պաշտպանության մասին սահմանում է, որ մայրության արձակուրդը պետք է տրամադրվի 14 շաբաթից ոչ պակաս ժամկետով, ներառյալ 6-շաբաթյա տնտրությամբ պարտադիր արձակուրդ երեխայի ծնունդից հետո:

¹⁹ Տե՛ս CEDAW, հոդված 11, պարագ. 2 (b):

²⁰ Հանձնաժողովը նաև նշում է, որ երեխաներն ունեն սոցիալական ապահովության իրավունք (տե՛ս Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, հոդված 26):

անպիսի բացառիկ արտակարգ իրավիճակներում, ինչպես օրինակ, ՄԻԱՎ/ՉԻԱՀ, տուբերկուլյոզ և մալարիա, մեծ թվով երեխաների և ծեր մարդկանց՝ առանց ընտանիքի կամ համայնքային օժանդակության մնալը:

3. Համարժեքություն

Արտոնությունները, անկախ դրամական կամ այլ տեսակի լինելուց, պետք է լինեն այն չափով և տևողությամբ, որպեսզի ցանկացածը կարողանա իրացնել ընտանիքի պաշտպանության կամ աջակցության իրավունքները, կյանքի համապատասխան մակարդակ և համարժեք հնարավորություն առողջապահության, ինչպես ամրագրված է Դաշնագրի 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներում: Մասնակից պետությունները պետք է ամբողջական հարգանք ցուցաբերեն Դաշնագրի նախաբանում ամրագրված մարդու արժանապատվության և խտրականության արգելքի սկզբունքների նկատմամբ, որպեսզի բացառեն որևէ անբարենպաստ ազդեցություն արտոնությունների մակարդակի և տրամադրման ձևի նկատմամբ: Կիրառվող մեթոդները պետք է ապահովեն արտոնությունների համարժեքությունը: Համարժեքության չափանիշը պետք է պարբերաբար մշտադիտարկվի, որպեսզի ապահովվի, որ շահառուները կարողանան օգտվել իրենց դաշնագրային իրավունքների իրացման համար անհրաժեշտ ապրանքներից և ծառայություններից: Երբ անձը կատարում է ներդրումներ սոցիալական ապահովության համակարգում, որն ապահովում է արտոնություններ եկամտի բացակայությունը հատուցելու համար, պետք է լինի ողջամիտ փոխհարաբերություն եկամտի, ներդրումների և համապատասխան արտոնության չափի/մեծության միջև:

4. Հասանելիություն

ա) Ծածկույթ

Բոլոր անձինք պետք է ապահովված լինեն սոցիալական ապահովության համակարգով, հասկապես այն անձինք, ովքեր պատկանում են առավել անբարենպաստ և մարզինալացված խմբերին՝ առանց Դաշնագրի հոդված 2-րդով սահմանված որևէ հիմքով խտրականության: Համընդհանուր կիրառելիություն ապահովելու նպատակով պետք է գոյություն ունենան սոցիալական ապահովության ոչ ներդրումային համակարգեր:

բ) Արտոնությունների գնահատողական պայմանները պետք է լինեն ողջամիտ, համամասնական և թափանցիկ: Արտոնությունների դադարեցումը, նվազեցումը կամ կասեցումը պետք է սահմանափակվեն ողջամիտ հիմքերով՝ հիմնված պատշաճ վարույթի վրա, և սահմանված լինեն ազգային օրենսդրությամբ:

գ) Մատչելիություն

Եթե սոցիալական ապահովության համակարգը պահանջում է ներդրումներ, այդպիսիք պետք է նախապես սահմանված լինեն: Ներդրումներ կատարելու հետ կապված ուղղակի և անուղղակի ծախսերը և վճարները պետք է մատչելի լինեն բոլորի համար և չպետք է խոչընդոտեն դաշնագրային իրավունքների իրացմանը:

դ) Մասնակցություն և տեղեկատվություն

Սոցիալական ապահովության շահառուները պետք է կարողանան մասնակցել սոցիալական ապահովության համակարգի կառավարմանը²¹: Համակարգը պետք է հիմնված լինի ազգային իրավունքի հիման վրա և ապահովի անհատների և կազմակերպությունների իրավունքը՝ փնտրել, ստանալ և հաղորդել տեղեկատվություն՝ սոցիալական անվտանգության բոլոր իրավունքների վերաբերյալ, պարզ և թափանցիկ ձևով:

ե) Ֆիզիկական մատչելիություն/հնարավորություն

Արտոնությունները պետք է իրացվեն ժամանակին, և շահառուները պետք է հասանելիություն ունենան սոցիալական ապահովության ծառայություններին՝ արտոնությունների և տեղեկատվության հասանելիության և անհրաժեշտության դեպքում ներդրումներ կատարելու համար: Այս առումով հատուկ ուշադրություն պետք է դարձվի

²¹ Սոցիալական ապահովության (Նվազագույն ստանդարտների) մասին ԱՄԿ թիվ 102 կոնվենցիան (1952) սահմանում է նույնական պահանջներ:

հաշմանդամություն ունեցող անձանց, միգրանտներին, հեռավոր կամ աղետալի վիճակում գտնվող, ինչպես նաև զինված կոնֆլիկտի մեջ գտնվող տարածքներում բնակվող անձանց, որպեսզի նրանք ևս հասանելիություն ունենան այդ ծառայություններին:

5. Այլ իրավունքների հետ փոխհարաբերությունը.

Սոցիալական ապահովության իրավունքը կարևոր դեր է կատարում Դաշնագրով սահմանված իրավունքների իրացման համար, բայց այլ միջոցներն անհրաժեշտ են սոցիալական ապահովության իրավունքը լրացնելու համար: Օրինակ, մասնակից պետությունները պետք է տրամադրեն սոցիալական ծառայություններ վնասվածք ստացած և հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման համար Դաշնագրի 6-րդ հոդվածին համապատասխան, երեխաների խնամք և բարեկեցության ապահովում, խորհրդատվություն և աջակցություն ընտանիքի պլանավորման և հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ հարմարությունների տրամադրման համար (հոդված 10), միջոցներ ձեռնարկեն աղքատության հաղթահարման և սոցիալական ներառման համար և տրամադրեն աջակցող սոցիալական ծառայություններ (հոդված 11), համապատասխանեցնեն աղետները կանխելու միջոցները և զարգացնեն առողջապահական հարմարությունները, ապրանքները և ծառայությունները (հոդված 12)²²: Մասնակից պետությունները պետք է հաշվի առնեն նաև մեխանիզմներ, որոնք տրամադրում են սոցիալական ապահովություն այնպիսի անհատներին, ովքեր պատկանում են անապահով և առանձնացված խմբերին, օրինակ բերքի կամ աղետներից ապահովագրության տրամադրում փոքր ֆերմերներին 23 կամ ոչ ֆորմալ տնտեսությունում ապրուստի միջոցի պաշտպանություն, ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձանց ապրուստի միջոցի պաշտպանություն: Այնուամենայնիվ, դաշնագրային այլ իրավունքների իրացման միջոցների ձեռնարկումը չպետք է փոխարինի սոցիալական ապահովության մեխանիզմներ ստեղծելուն:

Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ սոցիալական ապահովության իրավունքին առավելապես վերաբերում են թիվ 102, 118, 128 և 157 կոնվենցիաները, որոնցից ՀՀ կողմից վավերացվել է միայն **Իրավահավասարության մասին (սոցիալական ապահովության ոլորտում) 1962 թվականի թիվ 118 կոնվենցիան (այսպես կոչված «տեխնիկական կոնվենցիա», ոչ հիմնարար)**:

ԱՄԿ Նվազագույն սոցիալական ստանդարտների մասին 1952 թվականի թիվ 102 կոնվենցիան, որը սոցիալական ապահովության բնագավառում ամենակարևոր փաստաթղթերից է, մինչ այժմ չի վավերացվել Հայաստանի Հանրապետության կողմից²⁴: Այս կոնվենցիան սահմանում է անձի սոցիալական ապահովության նվազագույն մակարդակը ապահովելու համար անհրաժեշտ արտոնությունները և պայմանները: Այն ընգրկում և կարգավորում է սոցիալական ապահովության բոլոր ճյուղերը, ինչպես օրինակ, բժշկական օգնության, հիվանդության, գործազրկության, ծերության, աշխատանքային խեղման, ընտանիքի, մայրության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում տրվող արտոնությունները:

²² St´u [Social Security principles](#), *Social Security Series No. 1*, ILO (1998), p. 14 and general comments No. 5 (1994) on persons with disabilities, No. 6 (1995) on the economic, social and cultural rights of older persons; No. 12 (1999) on the right to adequate food (art. 11); No. 13 (1999) on the right to education (art. 13); No. 14 (2000) on the right to the highest attainable standard of health (art. 12); No. 15 (2002) on the right to water (arts. 11 and 12); and No. 18 (2005) on the right to work (art. 6).

²³ [Social Security principles](#), *Social Security Series No. 1*, ILO, p. 29.

²⁴ http://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:11300:0::NO::P11300_INSTRUMENT_ID:312247, http://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:11310:0::NO:11310:P11310_INSTRUMENT_ID:312247:NO

Համոզվելու համար, որ վերոնշյալ կոնվենցիայով սահմանված պարտավորությունները կարող են պահպանվել բոլոր ազգային հանգամանքներում, կոնվենցիան առաջարկում է պետություններին հնարավորություն՝ վավերացնել ինը ճյուղերից (իրավունքներից) առնվազն երեքը և զուգահեռաբար ընդունել մնացյալ ճյուղերի համապատասխան պարտավորությունները՝ դրանով ապահովելով կոնվենցիայով սահմանված բոլոր պահանջների աստիճանական կատարումը: Նվազագույն արտոնությունների մակարդակը կարող է որոշվել տվյալ երկրում աշխատավարձի մակարդակի հիման վրա: Ժամանակավոր բացառությունները կարող են նախատեսվել այն պետությունների համար, որոնց տնտեսությունը և բժշկական հնարավորությունները անբավարար են զարգացած՝ դրանով հնարավորություն տալով վերջիններիս սահմանափակել կոնվենցիայի և դրանով սահմանված արտոնությունների շրջանակը:

Ուսումնասիրելով ԱՄԿ կոնվենցիաները՝ նկատում ենք, որ կոնվենցիաների տեքստում նշվում են **1. այն պարտավորությունները, որոնք պարտադիր են տվյալ կոնվենցիան վավերացնող պետության համար, 2. այն պարտավորությունները, որոնք լրիվ կամ մասնակի կարող են ստանձնել պետությունները իրենց ընտրությամբ՝ այդ մասին նշելով համապատասխան վավերացման փաստաթղթում:**

Հայաստանի Հանրապետությունը մինչ այժմ վավերացրել է ԱՄԿ 29 կոնվենցիա, որոնցից 8-ը հիմնարար (ֆունդամենտալ) կոնվենցիաներ են: Նշված ութ կոնվենցիաները այն հիմնական փաստաթղթերն են, որոնցով ԱՄԿ-ն սահմանել է պետությունների հիմնական պարտավորությունները անձի աշխատանքի իրավունքի ապահովման վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության և Աշխատանքի միջազգային կազմակերպության փոխհարաբերություններին, ապա այն կարծես թե բավականին դինամիկ է: Վերջին հարցադրմամբ (հրապարակված 2019թ.) ԱՄԿ-ն Հայաստանի Կառավարությունից պահանջել է տրամադրել տեղեկատվություն ԱՄԿ Ոչ ֆորմալից ֆորմալ տնտեսության անցման վերաբերյալ խորհրդատվությունը (2015, No. 204) (ընդունված վերջինիս 104-րդ նստաշրջանում), ինչպես նաև Զբաղվածության և հանուն խաղաղության և խորհրդատվությունը (ընդունված վերջինիս 106-րդ նստաշրջանում) Ազգային ժողով ներկայացնելու վերաբերյալ:

§1.4. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Սոցիալական իրավունքների մասով եվրոպական միության իրավունքի մասին խոսելիս առաջին հերթին անհրաժեշտ է նշել Սոցիալական իրավունքների եվրոպական համակարգի (EPSR) մասին, որը քաղաքացիների համար նոր և առավել արդյունավետ իրավունքներ տրամադրելու մասին է: Այն սահմանում է սոցիալական իրավունքների ոլորտում երեք հիմնական կատեգորիաներ (սկզբունքներ), որոնք հետևյալն են.

- **Հավասար հնարավորություններ և աշխատանքի շուկայի հասանելիություն,**
- **Արդար աշխատանքային պայմաններ,**
- **Սոցիալական պաշտպանություն և ներառում²⁵:**

Սույն հետազոտության շրջանակներում առավելապես կքննարկենք սոցիալական պաշտպանության և ներառման ոլորտում ԵՄ հիմնական իրավական կարգավորումները: Այսպես, ըստ առանձին կատեգորիաների (ուղղությունների)՝ քննարկենք ապահովման ենթակա սոցիալական ապահովության ծավալը:

1. Երեխաների խնամք և աջակցություն երեխաներին.

Երեխաները մատչելի վաղ նախադպրոցական կրթության և բարձր որակի խնամքի իրավունք ունեն: Երեխաներն աղքատությունից պաշտպանության իրավունք ունեն: Անբարենպաստ ծագում ունեցող երեխաները հավասար հնարավորություններ իրացնելու համար հատուկ միջոցների իրավունք ունեն:

2. Սոցիալական պաշտպանություն.

Անկախ աշխատանքային հարաբերության տեսակից և տևողությունից՝ աշխատողները, իսկ համեմատելի հանգամանքներում նաև ինքնազբաղվածները իրավունք ունեն համարժեք սոցիալական պաշտպանության:

3. Գործազրկության երաշխիքներ.

Գործազուրկները խրախուսման, համարժեք աջակցության իրավունք ունեն օգտվելու հանրային աշխատանքային ծառայություններից՝ աշխատանքի շուկային (վերա)ինտեգրվելու համար և ողջամիտ ժամկետով գործազրկության համարժեք արտոնությունների (նպաստների)՝ համաձայն իրենց ներդրումների և ազգային կիրառելի կանոնների: Այդպիսի նպաստները չպետք է խանգարեն հնարավորինս շուտ աշխատանքի վերադառնալուն:

4. Նվազագույն եկամուտ.

Յուրաքանչյուր ոք, ով չունի համարապատասխան միջոցներ (ռեսուրսներ), իրավունք ունի նվազագույն եկամտի նպաստների՝ ապահովելու արժանապատիվ կյանք կյանքի բոլոր փուլերում և ապրանքներից ու ծառայություններից օգտվելու արդյունավետ հնարավորություն: Նրանց համար, ովքեր կարող են աշխատել, նվազագույն եկամտային արտոնությունները պետք է զուգակցվեն խթանիչների հետ՝ աշխատաշուկա (վերա)ինտեգրվելու համար:

5. Ծերության եկամուտ և կենսաթոշաներ.

Աշխատողները և ինքնազբաղվածները իրավունք ունեն կենսաթոշակի՝ իրենց ներդրումներին համաչափ ապահովելով համարժեք եկամուտ: Կանայք և տղամարդիկ պետք է հավասար հնարավորություն ունենան կենսաթոշակի իրավունքն իրացնելու համար: Ծերության տարիքում գտնվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի ռեսուրսների, որոնք կապահովեն արժանապատիվ կյանք:

6. Առողջապահություն.

Յուրաքանչյուր ոք մատչելի, կանխարգելիչ, ժամանակին և բուժիչ բարձր որակի առողջապահության մատչելիության իրավունք ունի:

²⁵ https://ec.europa.eu/commission/priorities/deeper-and-fairer-economic-and-monetary-union/european-pillar-social-rights_en:

7. Հաշմանդամություն ունեցող անձանց ներառում.

Հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն եկամուտների աջակցության, որը կապահովի արժանապատիվ կյանք, այնպիսի ծառայություններ, որոնք հնարավորություն կտան նրանց ներգրավվել աշխատաշուկայում և հասարակության մեջ, ինչպես նաև աշխատել իրենց կարիքներին հարմարեցված միջավայրում:

8. Երկարաժամկետ խնամք.

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի երկարատև խնամքի որակյալ ծառայություններ ստանալու, մասնավորապես տնային խնամք և համայնքահեն ծառայություններ:

9. Բնակարանային պայմաններ և բնակարան չունեցողների աջակցություն.

ա. որակյալ սոցիալական բնակարանային պայմանները կամ բնակարանային աջակցությունը պետք է տրամադրվի դրա կարիքն ունեցողներին,
բ. խոցելի անձիք իրավունք ունեն պատշաճ աջակցության և պաշտպանության՝ հարկադրված տարհանման/վտարման դեպքում,
գ. համարժեք ապաստան և ծառայություններ պետք է տրամադրվեն անտուններին՝ նրանց սոցիալական ներառումը խթանելու նպատակով:

10. Նվազագույն ծառայությունների հասանելիություն.

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բարձր որակի հիմնական ծառայությունների հասանելիության, ներառյալ ջուր, սանիտարական պայմաններ, էներգիա, տրանսպորտ, ֆինանսական ծառայություններ և էլեկտրոնային հաղորդակցություն: Նման ծառայությունների հասանելիության աջակցությունը պետք է տրամադրվի դրա կարիքն ունեցողներին²⁶:

Անհրաժեշտ ենք համարում հիշատակել նաև Եվրոպական միության շրջանակներում սոցիալական իրավունքների վերաբերյալ ընդունված **Միության աշխատողների հիմնարար սոցիալական իրավունքների մասին խարտիայի** (ընդունված 1989 թվականի դեկտեմբերի 9-ին) մասին, որն ընդունվել է ԵՄ բոլոր անդամ պետությունների կողմից՝ բացի Միացյալ թագավորությունից²⁷: Այս փաստաթուղթը չի հանդիսանում ԵՄ պարտադիր իրավական ակտ, ոչ էլ մասնակից պետությունների միջև կնքված միջազգային պայմանագիր, որը պարտադիր է միջազգային իրավունքում: Այն ընդամենը մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների պաշտոնական հայտարարություն է: Այն պետք է գործածվի որպես ԵՄ կանոնակարգի դրույթների մեկնաբանմանն օժանդակող գործիք, քանի որ պարունակում է անդամ պետությունների ընդհանուր ավանդույթներ և տեսլականներ: Միության կանոնակարգի իրականացման Գործողությունների ծրագրի հետ մեկտեղ այն օգտագործվում է Հանձնաժողովի կողմից՝ իր կողմից ընդունվող դիրեկտիվները հիմնավորելու համար:

Միության կանոնակարգը նախատեսում է, որ անդամ պետությունները սոցիալական իրավունքների երաշխավորման հարցում հիմնականում պատասխանատու են իրենց ազգային օրենսդրություններին համապատասխան: Միությունը գործողություններ ձեռնարկում է միայն այնքանով, որ կանոնակարգի 29-րդ և 30-րդ հոդվածներին համապատասխան Հանձնաժողովը պետք է տարեկան զեկույց կազմի կանոնակարգի կատարման վերաբերյալ և ներկայացնի Խորհուրդ, Խորհրդարան և Սոցիալական հանձնաժողով:

Եվրոպական միության շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը վերաբերելի և կիրառական նշանակություն ունեցող փաստաթուղթ է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև 2017թ. ստորագրված **Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ, CEPA)**: Վերջինիս շրջանակներում Հայաստանը մասնավորապես պետք է իրականացնի համագործակցություն և համապատասխանեցում մի շարք սոցիալական իրավունքների և

²⁶ Տե՛ս https://ec.europa.eu/commission/priorities/deeper-and-fairer-economic-and-monetary-union/european-pillar-social-rights/european-pillar-social-rights-20-principles_en:

²⁷ Տե՛ս http://www.europarl.europa.eu/workingpapers/soci/pdf/104_en.pdf:

խնդիրների լուծման շուրջ: Այսպես, նշված փաստաթղթի 84-րդ հոդվածի համաձայն՝ «Կողմերը պետք է ուժեղացնեն իրենց համագործակցությունը և երկխոսությունը Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Լիարժեք աշխատանքային օրակարգի, զբաղվածության քաղաքականության, աշխատանքի և առողջության ապահովման, սոցիալական երկխոսության, սոցիալական պաշտպանության, սոցիալական ներգրավման, գենդերային հավասարության և հակասող խտրականության, նպաստել ավելի ու ավելի լավ աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության կրճատմանը, ուժեղացված սոցիալական համախմբմանը, կայուն զարգացմանը և կյանքի որակի բարձրացմանը:»²⁸: Համաձայնագրի Հավելված 7-ում սահմանված են ԵՄ կոնկրետ դիրեկտիվները՝ համապատասխանաբար աշխատանքային իրավունքի, աշխատանքում անվտանգության և առողջության իրավունքի, հակախտրականության և գենդերային հավասարության բնագավառներում, որոնց համապատասխանությունը Հայաստանը պետք է ապահովի յուրաքանչյուր դիրեկտիվի համար սահմանված ժամկետներում: Այդ ժամկետները տատանվում են երեքից յոթ տարվա միջակայքում, իսկ որոշ մասի համար հստակ ժամկետ դեռևս սահմանված չէ:

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի վերաբերյալ քաղաքացիական հասարակության դերակատարների կողմից մշակված Գործողությունների ծրագրի և ճանապարհային քարտեզի²⁹ համաձայն՝ աշխատանքում առողջության և անվտանգության իրավունքի վերաբերյալ բարձրացվել են հետևյալ խնդիրները.

Խնդրի նկարագրություն	Գործողություն	Ակնկալվող արդյունքը	Համապատասխանության մակարդակ
Իրենց իրավունքները դատական կարգով պաշտպանելու աշխատողների իրավունքը խախտվում է անկախ աշխատանքային տեսչության բացակայության պատճառով	Ստեղծել անկախ և արդյունավետ աշխատող Աշխատանքի պետական տեսչություն ԱՄԿ-ի 81-րդ կոնվենցիայի չափանիշներին համապատասխան	Անկախ և արդյունավետ Աշխատանքի պետական տեսչության գոյություն	Մարդու աշխատանքային իրավունքների պաշտպանությունը ապահովվում է արդյունավետ մեխանիզմներով
Անձանց սոցիալական ապահովության իրավունքը խախտվում է գործազրկության նպաստների համակարգի վերացման պատճառով	Վերագործարկել գործազուրկներին տրված գործազրկության նպաստները	Գործազրկության նպաստները ամրագրվեն օրենսդրության մեջ և գործնականում վերականգնվեն	Գործազուրկի կարգավիճակ ունեցող անձիք ֆինանսապես ապահով և պաշտպանված են
Աշխատանքային օրենսգրքում նախատեսվող Կռաավարության նախագծած փոփոխությունները պարունակում են աշխատանքային իրավունքների կոպիտ խախտումներ	Դադարեցնել աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների նախագծի շրջանառությունը	Աշխատանքային շահագործում թույլատրող օրենսդրական նախաձեռնությունը դադարեցվում է	Մարդու աշխատանքային իրավունքների պաշտպանությունը ապահովվում է արդյունավետ մեխանիզմներով

²⁸ Տե՛ս https://eeas.europa.eu/sites/eeas/files/eu-armenia_comprehensive_and_enhanced_partnership_agreement_cepa.pdf:

²⁹ Տե՛ս http://www.osf.am/wp-content/uploads/2018/06/CEPA-Roadmap_ENG-Draft_June-2018.pdf:

§2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՄԲ ՁԲԱՂՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ (ՄԱՐՄԻՆՆԵՐԸ)

Միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված սոցիալական իրավունքներն ապահովված են պաշտպանության համապատասխան մեխանիզմներով, որպիսիք են հանդիսանում նաև համապատասխան միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված մասնագիտացված մարմինները: Առանձնացնենք հիմնականում այն միջազգային մարմինները, որոնք գործառույթներ են իրականացնում սոցիալական ապահովության իրավունքի բնագավառում:

Առաջին հերթին անհրաժեշտ է նշել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի մասին, որը, համաձայն կանոնադրության, ուսումնասիրություններ է կազմակերպում և հանձնարարականներ ներկայացնում, ի թիվս այլի, նաև տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական և առողջապահության ասպարեզներում միջազգային համագործակցությանը աջակցելու համար՝ առանց ցեղային, սեռային, լեզվի և դավանանքի տարբերակման: Գլխավոր ասամբլեան կարող է մարդու իրավունքների վերաբերյալ հարցերը քննել ինչպես անմիջականորեն, այնպես էլ իր մարմինների միջոցով: Այդ հարցերի մեծ մասը, որպես կանոն, փոխանցվում է *էրրորդ կոմիտեին*, որը զբաղվում է սոցիալական, մարդասիրական և մշակութային հարցերով³⁰:

Բացի այդ, գոյություն ունեն ՄԱԿ-ի հանձնաժողովներ (կոնվենցիոն մարմիններ), որոնք ստեղծված են վերահսկելու մարդու իրավունքների վերաբերյալ կոնկրետ փաստաթղթերը: Այս հանձնաժողովները վերահսկում են կոնվենցիաների պահանջների կատարումը, ներառյալ, բայց չսահմանափակվելով, կոնվենցիաների կատարման վերաբերյալ կառավարական զեկույցների ստացման, կառավարական զեկույցները մեկնաբանելու և կոնվենցիաներով սահմանված հատուկ իրավունքների կամ կոնվենցիաների վերաբերյալ ընդհանուր մեկնաբանություններ ներկայացնելու ձևով:

Այսպես, **Մարդու իրավունքների հանձնաժողովը** (Հանձնաժողով, ստեղծվել է 1946թ.) անկախ փորձագետներից կազմված մարմին է, որը հսկում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի դրույթների կատարումը մասնակից պետությունների կողմից: Ի լրումն զեկույցների ներկայացման ընթացակարգի՝ դաշնագրի 41-րդ հոդվածը Հանձնաժողովին իրավունք է տալիս քննարկելու միջպետական բողոքներ: Ավելին, դաշնագրի առաջին կամընտիր արձանագրությունը Հանձնաժողովին իրավասություն է տալիս քննելու անհատական գանգատներ՝ կապված մասնակից պետությունների կողմից դաշնագրի ենթադրյալ խախտումների հետ:

Տնտեսական և սոցիալական խորհուրդը, ՄԱԿ-ի կանոնադրության 62-րդ և 64-րդ հոդվածներին համապատասխան, կարող է հանձնարարականներ ներկայացնել բոլոր պետություններին՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը ու դրանց պահպանումը խրախուսելու համար, ինչպես նաև զեկույցազիր պահանջել անդամ պետություններից և մասնագիտական հաստատություններից իր հանձնարարականների կատարման վերաբերյալ:

Տնտեսական և սոցիալական խորհուրդը բաղկացած է Միացյալ ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից ընտրված հիսունչորս անդամներից: Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է իր իրավասության շրջանակներում գտնվող հարցերի վերաբերյալ համաձայնագրերի նախագծեր պատրաստել Գլխավոր ասամբլեային ներկայացնելու համար:

³⁰ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք, Հեղինակային խումբ, Երևան, 2016, էջ 361:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն (CESCR) անկախ փորձագետներից բաղկացած մարմին է, որը մշտադիտարկում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի (Հայաստանը միացել է դաշնագրին 1993թ.) դրույթների կատարումը մասնակից պետությունների կողմից: Հանձնաժողովը, ի թիվս զեկույցներ քննելու ընթացակարգի, դաշնագրի կամընտիր արձանագրության համաձայն (ուժի մեջ է 2013թ. մայիս ամսից), իրավունք ունի ստանալու և քննարկելու անհատներից ստացված բողոքներ՝ դաշնագրով սահմանված իրենց իրավունքների խախտման վերաբերյալ: Հանձնաժողովը նաև կարող է, որոշակի հանգամանքների առկայության դեպքում անցկացնել հարցումներ դաշնագրով սահմանված որևէ տնտեսական, մշակութային կամ սոցիալական իրավունքի՝ լրջորեն կրկնվող (systematic) խախտումների դեպքում և քննարկել միջպետական գանգատներ: Հանձնաժողովը նաև հրապարակում է դաշնագրի պաշտոնական մեկնաբանություններ՝ հայտնի որպես Ընդհանուր մեկնաբանություններ (*general comments*):

Հանձնաժողովն ըստ իրավունքների և որոշակի ոլորտների մեկնաբանում է դաշնագրով սահմանված երաշխիքների շրջանակները: Այսպես՝ դաշնագրի 9-րդ հոդվածով սահմանված սոցիալական ապահովության իրավունքի վերաբերյալ Հանձնաժողովն արձանագրել է հետևյալը. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի համաձայն՝ սույն դաշնագրի մասնակից պետությունները հռչակում են յուրաքանչյուրի իրավունքը սոցիալական ապահովության, այդ թվում սոցիալական ապահովագրության: Սոցիալական ապահովության իրավունքը կենտրոնական դեր է կատարում բոլոր անձանց մարդկային արժանապատվության ապահովման համար, երբ վերջիններս հայտնվում են այնպիսի իրավիճակում, որը նրանց զրկում է իրենց հնարավորություններից՝ իրացնելու դաշնագրով սահմանված իրենց իրավունքները: Սոցիալական ապահովությունը ճանաչվել է որպես մարդու իրավունք 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, որը 2-րդ հոդվածով սահմանել է հետևյալը. «Յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, իրավունք ունի սոցիալական ապահովության», իսկ 25 (1) հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք իրավունք ունի գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիության, ծերության և իր հսկողությունից դուրս կենսապայմանների բացակայության այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք»: Իրավունքը հաջորդաբար ինկորպորացվել է մարդու իրավունքների մի շարք միջազգային և տարածաշրջանային կոնվենցիաներում: 2001թ. Աշխատանքի միջազգային կոնֆերանսում, բաղկացած մասնակից պետություններից, գործատուներից և աշխատողներից, հաստատվեց, որ «**սոցիալական ապահովությունը մարդու հիմնական իրավունք**»³¹ է և **հիմնարար նշանակություն ունի հասարակական համախմբման համար**»:³²

Մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմիններ են հանդիսանում Մարդու իրավունքների հարցերով խորհրդի **հատուկ ընթացակարգերը**, որոնք զբաղվում են պետությունների կողմից իրենց իրավապաշտպան պարտավորությունների կատարման մշտադիտարկմամբ: Մարդու իրավունքների խորհուրդը նշանակում է անկախ փորձագետների՝ այս կամ այն թեմատիկ հարցի կամ պետության վիճակի ուսումնասիրության համար: Այդ փորձագետները հանդիսանում են հատուկ զեկուցողներ, հատուկ ներկայացուցիչներ կամ կազմում են աշխատանքային խմբեր:

³¹ Սույն դատողությամբ հերքվում է 2015թ. Սահմանադրության հայեցակարգի հեղինակների այն պնդումը, որ սոցիալական իրավունքները այլ իրավունքների համեմատությամբ ստորադաս են, և պետություն պարտավորությունները համապատասխանաբար ավելի փոքր ծավալի են:

³² COMMITTEE ON ECONOMIC, SOCIAL AND CULTURAL RIGHTS, GENERAL COMMENT No. 1932, The right to social security (art. 9).

Ներկայումս գոյություն ունեն մի քանի թեմատիկ մանդատներ կոնկրետ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով³³:

Ստորև, ըստ միջազգային (հիմնադիր) փաստաթղթի՝ համապատասխան միջազգային պայմանագրի, ներկայացնենք մարդու առանձին իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային մարմինները.³⁴

Պայմանագիր	Պայմանագրային մարմին	Գործառույթ		
		Մասնակից պետությունների պարբերական զեկույցների դիտարկում	Անհատական գանգատներ	Կոպիտ խախտումների քննություն
Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա	Երեխայի իրավունքների հանձնաժողով	✓	✓ ³⁵	✓ ³⁶
Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա	Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով հանձնաժողով	✓	✓	✓
Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա	Ռասայական խտրականության հարցերով հանձնաժողով	✓	✓	
Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա	Երեխայի իրավունքների հարցերով հանձնաժողով	✓		
Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիա	Աշխատող միգրանտների հարցերով հանձնաժողով	✓	✓	
Քաղաքական և քաղաքացիական իրավունքների	Մարդու իրավունքների հանձնաժողով	✓	✓	

³³ Տե՛ս УПРАВЛЕНИЕ ВЕРХОВНОГО КОМИССАРА ОРГАНИЗАЦИИ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА, Часто задаваемые вопросы относительно экономических, социальных и культурных прав, Изложение фактов № 33, стр. 49-50:

³⁴ Տե՛ս УПРАВЛЕНИЕ ВЕРХОВНОГО КОМИССАРА ОРГАНИЗАЦИИ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА, Часто задаваемые вопросы относительно экономических, социальных и культурных прав, Изложение фактов № 33, стр. 48-50:

³⁵ Այս ֆունկցիան Հանձնաժողովի վրա կորվի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի Լրացուցիչ արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո:

³⁶ Այս ֆունկցիան Հանձնաժողովի վրա կորվի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի Լրացուցիչ արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո:

դաշնագիր				
Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով հանձնաժողով	✓	✓	✓

Տարածաշրջանային մակարդակով գործող մարդու իրավունքների պաշտպանության մարմիններից է **Եվրոպայի խորհրդի Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն**, որը որոշումներ է ընդունում Եվրոպական սոցիալական խարտիայի, 1988 թվականի Լրացուցիչ արձանագրության և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի հետ՝ պետություններում տիրող իրավիճակի համապատասխանության մասին:

Անհրաժեշտ է առանձնահատուկ հիշատակել նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հիման վրա ստեղծված **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի** մասին, որի որոշումները պարտադիր են պետությունների համար, և որը, որպես «կենդանի գործիք», մեկնաբանում է նշված կոնվենցիան և իրականացնում մարդու իրավունքների պաշտպանություն:

ԳԼՈՒԽ 2. ԱԶԳԱՅԻՆ (ՆԵՐՊԵՏԱԿԱՆ) ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

§2.1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության նախորդ (2005թ.) և գործող (2015թ.) Սահմանադրությունների համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ գործող Սահմանադրությամբ սոցիալական իրավունքների մի մասը մարդու իրավունքների գլխից (Գլուխ 2) տեղափոխվել և ամրագրվել են Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները գլխում (Գլուխ 3):

2015թ. Սահմանադրության հայեցակարգի համաձայն՝ «Սոցիալական պետության սկզբունքն օբյեկտիվ սահմանադրական նորմ է և, որպես այդպիսին, դեռևս չի սահմանում քաղաքացու սուբյեկտիվ իրավունքներ: Այն սերտ կապի մեջ է գտնվում սոցիալական հիմնական իրավունքների և պետության նպատակների մասին դրույթների հետ: Սոցիալական հիմնական իրավունքները և պետության նպատակներն առանց տարբերակման ամրագրված են գործող Սահմանադրության 2-րդ գլխի բազմաթիվ հոդվածներում, ընդ որում, Սահմանադրությունը շատ դեպքերում պետության սոցիալական նպատակները ձևակերպել է որպես սոցիալական հիմնական իրավունքներ:

Տվյալ դեպքում առաջարկվում է, իրավական որոշակիության և հստակության պահանջներից ելնելով, սոցիալական հիմնական իրավունքները և պետության նպատակները միմյանցից տարանջատել, քանի որ դրանք առաջացնում են լիովին տարբեր իրավական հետևանքներ: Ընդ որում, տարանջատման հիմքում նախատեսվում է դնել հետևյալ չափանիշը. «Սոցիալական ոլորտին վերաբերող բոլոր այն դրույթները, որոնք պարտավորեցնում են միայն օրենսդրին և գործադրին, պետք է ձևակերպվեն որպես պետության նպատակներ, քանի որ դրանք անհատի անմիջական իրավական պահանջներ չեն, այլ պարունակում են միայն նպատակներ, որոնք պետությունը պետք է իրագործի «հնարավորության շրջանակներում»: Ի տարբերություն հիմնական իրավունքների՝ պետության նպատակները միայն օբյեկտիվ-իրավական դրույթներ են և չեն առաջացնում սուբյեկտիվ իրավունքներ: Գործադիր իշխանության կողմից պետության սոցիալական ծրագրերի արդյունավետ իրագործման կարևոր երաշխիք կարող է լինել Ազգային ժողովին որոշակի պարբերականությամբ կառավարության զեկույցի ներկայացումը»³⁷:

Մասնագետների մի մասի կարծիքով՝ «Պետք է նկատի ունենալ, որ կան այնպիսի սոցիալական իրավունքներ, որոնք սահմանադրական իրավունքի դոկտրինում պատմականորեն զարգացել են որպես «դասական» հիմնական իրավունքներ, օրինակ՝ կրթության իրավունքը, աշխատանքի ընտրության ազատությունը, գործադուլի իրավունքը և այլն»³⁸:

Գործող Սահմանադրության հայեցակարգի համաձայն՝ «Սոցիալական իրավունքների զգալի մասը, որպես կանոն, անմիջականորեն գործող իրավունքներ չեն, այլ սոցիալական ոլորտում օրենսդրական երաշխիքներ և պետության նպատակներ են, որոնք մարդու և քաղաքացու համար սուբյեկտիվ իրավունքներ չեն առաջացնում, և պարտավորեցնում են միայն օրենսդրին ու գործադիրին: Այդ իրավունքները կարող են

³⁷ ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողով, Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն), Երևան, 2015, էջեր 139-140:

³⁸ Տե՛ս Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, Համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016թ., էջ 40:

իրագործվել և ենթակա լինել դատական պաշտպանության միայն այն բանից հետո, երբ դրանց բովանդակությունն ու ծավալը հստակեցվեն օրենքով: Նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ սոցիալական իրավունքների, սոցիալական ոլորտում օրենսդրական երաշխիքների և պետության նպատակների մեծ մասի իրականացման ծավալները կախված են պետության տնտեսական հնարավորություններից: Օրինակ՝ պետության տնտեսական հնարավորություններով պայմանավորված՝ անվճար բժշկական օգնության ծավալները կարող են զանազան երկրներում տարբեր լինել: Այսինքն՝ պետությունը ոչ թե Սահմանադրությամբ, այլ իր օրենսդրությամբ է որոշում դրանց ծավալը:

Հիմնական իրավունքների անմիջական գործողության առումով 2005թ. փոփոխություններով Սահմանադրությունը լուրջ խնդիրներ էր պարունակում: Սահմանադրության 2-րդ գլուխը վերնագրված էր «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները», ինչը առերևույթ տպավորություն էր ստեղծում, թե դրանում ամրագրված բոլոր իրավունքները անմիջականորեն գործող «դասական» հիմնական իրավունքներ են: Մինչդեռ այդ գլխում «դասական» հիմնական իրավունքները որևէ կերպ չէին սահմանազատվել սոցիալական իրավունքներից, սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտներում պետության նպատակներից ու խնդիրներից, ինչպես նաև տարբեր տեսակի արգելքներից: Սահմանադրության 2-րդ գլխի բազմաթիվ հոդվածներում ամրագրվել էին սոցիալական իրավունքներ, իսկ շատ դեպքերում էլ պետության սոցիալական քաղաքականության նպատակները ձևակերպվել էին որպես սոցիալական հիմնական իրավունքներ (օրինակ՝ հանգստի իրավունք, առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների իրավունք, սոցիալական ապահովության իրավունք, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք և այլն): Քաղաքացիական և քաղաքական հիմնական իրավունքների և սոցիալ-տնտեսական իրավունքների միջև տարանջատում չդնելը բնորոշ է գրեթե բոլոր հետխորհրդային երկրների սահմանադրությունների³⁹: Խնդիրն այն է, որ խորհրդային ռեժիմից անմիջապես հետո պետությունները չէին կարող կտրուկ հրաժարվել խորհրդային սոցիալիստական պետության ավանդույթներից և սոցիալական իրավունքների ուղղակի սահմանադրական ամրագրումից, քանի որ դա պարունակում էր հասարակության կողմից չընկալվելու ռիսկեր: Հետևաբար, սոցիալական իրավունքների ճանաչման և պաշտպանության պատրանքը, առնվազն քաղաքական առումով, առավել գերադասելի էր: Մինչդեռ անգամ տնտեսապես զարգացած այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Ֆրանսիան, Գերմանիան և այլն, սոցիալական իրավունքները սահմանադրությամբ ամրագրված չեն որպես անմիջականորեն գործող իրավունքներ. դրանք նախատեսված են որպես օրենսդրական երաշխիքներ և պետության սոցիալական նպատակներ, որոնք պետություններն ապահովում են միայն իրենց հնարավորությունների շրջանակում:

Մարդու և քաղաքացու իրավունքների ամրագրման և երաշխավորման առումով 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը սկզբունքային նոր մոտեցումներ է որդեգրել: Կարևորագույն լուծումներից մեկը, մի կողմից՝ «դասական» հիմնական իրավունքների (գլուխ 2-րդ), իսկ մյուս կողմից՝ սոցիալական ոլորտում օրենսդրական երաշխիքների և պետության նպատակների (գլուխ 3-րդ) սահմանազատումն է: Դա հնարավորություն է տալիս առանձնացնելու բոլոր այն հիմնական իրավունքները, որոնց վրա անմիջականորեն հենվելով՝ անձը կկարողանա պաշտպանել իր սահմանադրական իրավունքները, ներառյալ՝ նորմատիվ սահմանադրական զանգատի միջոցով: Միևնույն ժամանակ, սոցիալական ոլորտին վերաբերող այն իրավունքները, որոնք հիմնական իրավունքներ են (օրինակ՝ աշխատանքի ընտրության ազատության իրավունքը կամ գործադուլի իրավունքը՝ Սահմանադրության 57-րդ և 58-րդ հոդվածներ), և որոնք

հնարավոր է պաշտպանել նաև սահմանադրական արդարադատության ճանապարհով, ամրագրված են 2-րդ գլխում՝ որպես անմիջականորեն գործող իրավունքներ⁴⁰:

Սահմանադրության հայեցակարգը մշակողների կարծիքին և հիմնավորումներին ծանոթանալուց բացի, կարևոր է նաև անդրադառնալ 2015թ. Սահմանադրության նախագծի վերաբերյալ *միջազգային փորձագետների* կարծիքին: Այսպես, *Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի)* կարծիքը ՀՀ 2015թ. Սահմանադրության նախագծի վերաբերյալ սոցիալական իրավունքների ամրագրման մասով դրական է, հանձնաժողովը ողջունել է անմիջականորեն կիրառման ոչ ենթակա իրավունքների ամրագրումը առանձին գլխի տեսքով⁴¹:

Սակայն Վենետիկի հանձնաժողովը նաև առանձնացրել է հստակեցնող և իրականում կենսական նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք հետևյալներն են. «82-85-րդ հոդվածներում նախատեսված իրավունքների սահմանման առաջադրանքը օրենսդրին ուղղակիորեն վստահելը բարձրացնում է այս իրավունքների բովանդակության հարցը, որոնք ենթադրում են իմպլեմենտացնող օրենսդրության ընդունում: Կարելի է փաստարկել, որ Սահմանադրությունն իր ընդունումից հետո անմիջապես առնվազն երաշխավորելու է այս իրավունքների օրենսդրական իմպլեմենտացման իրավունքը. արդյո՞ք այս «վիրտուալ» երաշխիքների դատական պաշտպանության հնարավորություն է լինելու: Արդյո՞ք հնարավոր է լինելու դիմել Սահմանադրական դատարան, եթե օրենսդրին չհաջողվի ընդունել իմպլեմենտացնող օրենսդրություն»:

Վերոնշյալ հարցադրումը և դատողությունն ինքին հուշում է մեզ սոցիալական իրավունքների կարևորության մասին, ինչպես նաև վերահաստատում այն պնդումը, որ *սոցիալական իրավունքները այլ իրավունքներին հավասար ենթակա են դատական և արտադատական կարգով պաշտպանության: Բացի այդ, օրենսդիրը պարտավորված է ընդունելու համապատասխան օրենսդրություն ապահովելու Սահմանադրության վերոնշյալ դրույթների իրացումը:*

Հիշեցնենք, որ Սահմանադրության 82-85-րդ հոդվածները վերաբերում են աշխատանքային պայմանների, սոցիալական ապահովության, արժանապատիվ գոյության և նվազագույն աշխատավարձի, առողջության պահպանության *երաշխիքներին*: Նկարագրված դրույթների իրավական նշանակությունը հասկանալու համար վերլուծենք «երաշխիք» հասկացությունը: Այսպես՝ սահմանադրական երաշխիքները սահմանադրական նորմեր են, որոնք ապահովում են մարդու իրավունքների և ազատությունների իրացումը, պաշտպանությունը և վերականգնումը: Դրանք, որպես կանոն, բաժանվում են երկու խմբի. **առաջին խումբը** կազմում են այն երաշխիքները, որոնք սահմանում են իրավունքների և ազատությունների իրացման մեխանիզմները (օրինակ Հունաստանի Սահմանադրությամբ որպես կրթության իրավունքի երաշխիք սահմանված են պարտադիր կրթության տևողությունը, դրա անվճար լինելը, բարձրագույն կրթություն ստանալու կարգը, պրոֆետորադասախոսական կազմի կարգավիճակի հիմունքները), **երկրորդ խումբ** երաշխիքները կազմում են հիմնական իրավունքների և ազատությունների խախտման դեպքում դրանց պաշտպանության և վերականգնման երաշխիքները (ինքնապաշտպանության իրավունք, դատական պաշտպանության իրավունք, անմեղության կանխավարկած և այլն): Սահմանադրաիրավական երաշխիքների **հաջորդ խումբը** կազմում են այն երաշխիքները, որոնք պետության կամ առանձին պետական մարմինների համար պարտավորություն են

⁴⁰ Տե՛ս Վ. Պողոսյան, Ն. Մարգարյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, Համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016թ., էջ 39-42:

⁴¹ Տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), Նախնական կարծիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ, Ստրասբուրգ, 2015թ. սեպտեմբերի 10, Կարծիք No. 757/2014, էջ 20:

սահմանում ապահովելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, իսկ որոշ դեպքերում նախատեսում են հատուկ մարմինների կամ պաշտոնատար անձանց ստեղծում, որոնց հիմնական խնդիրը կայանում է մարդու իրավունքների պաշտպանության համար միջոցների ձեռնարկումը, ինչպես օրինակ, Սահմանադրական դատարանի գործառնությունների ամրագրումը⁴²:

Մեր կողմից քննարկվող իրավիճակում Սահմանադրության 3-րդ գլխում ամրագրված երաշխիքները ներառում են վերոնշյալ բոլոր տեսակի երաշխիքները՝ օրենսդրի համար իրավական ակտեր ընդունելու նորմ-պահանջի տեսքով (85-րդ հոդված, մաս 2-րդ), մի շարք ոլորտներում առավելագույն ցանկալի նպատակին հասնելու կամքի ամրագրման ձևով՝ որպես պետական համապատասխան մարմինների գործունեության ուղենիշ և վերջնանպատակ (հոդված 86-րդ): Ստացվում է, որ որպես երաշխիք ձևակերպված մարդու իրավունքները և պետության նպատակները ևս ունեն իրավապարտադրող բնույթ պետության համար, պետության կողմից ստանձնած պարտավորություն են:

⁴² Տե՛ս <https://www.sovremennoepravo.ru/>:

**§2.2. ՆԱԽՈՐԴ ԵՎ ԳՈՐԾՈՂ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Գործող Սահմանադրության հայեցակարգում մի շարք սոցիալական իրավունքների ամրագրումը պետության քաղաքականության ուղղությունները սահմանող գլխում մեկնաբանվել և բացատրվել է հետևյալ կերպ. «Սահմանադրության 2-րդ գլուխը որևէ կերպ միմյանցից չի սահմանազատում նաև սոցիալական հիմնական իրավունքները և դասական հիմնական իրավունքները: Դրանց չտարբերակված ամրագրումը հիմնական իրավունքների ցանկում հարցականի տակ է դնում սահմանադրի այն սկզբունքային որոշումը, ըստ որի՝ հիմնական իրավունքներն անմիջականորեն գործող իրավունք են: Որպես կանոն, սոցիալական և ազատության հիմնական իրավունքները կառուցվածքային առումով միմյանցից արմատապես տարբերվում են: Եթե ազատության դասական հիմնական իրավունքները պետությունից առաջին հերթին պահանջում են ձեռնպահ մնալ այդ իրավունքներին միջամտությունից, ապա սոցիալական հիմնական իրավունքների մեծ մասը, ընդհակառակը, պահանջում է պետության պոզիտիվ գործողություններ՝ այդ իրավունքներն իրականացնելու նպատակով: Մինևույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կան սոցիալական ոլորտին վերաբերող բազմաթիվ հիմնական իրավունքներ, որոնք անմիջականորեն գործող իրավունքներ են (օրինակ՝ աշխատանքի ընտրության ազատության իրավունքը կամ գործադուլի իրավունքը), և որոնք հնարավոր է պաշտպանել սահմանադրական արդարադատության ճանապարհով: «Դասական» և սոցիալական հիմնական իրավունքների առանց տարբերակման ամրագրման վտանգները, մի կողմից, կայանում են նրանում, որ «դասական» հիմնական իրավունքների խստիվ պարտադիրությունը կարող է անիրականալի սպասելիքներ առաջացնել նաև սոցիալական հիմնական իրավունքների դեպքում, մյուս կողմից՝ ընդհակառակը, *ավելի ցածր աստիճանի պարտադիրությունը, որն ունեն սոցիալական հիմնական իրավունքները*, կարող է մեղմել այն խիստ պահանջները, որոնք առաջադրվում են «դասական» հիմնական իրավունքներին:⁴³»:

Փաստորեն, սահմանադրության հայեցակարգի մակարդակով փորձ է կատարվել սոցիալական իրավունքները ներկայացնել որպես նվազ կարևոր կամ պաշտպանության ոչ ենթակա իրավունքներ, չհամարել դրանք այլ իրավունքներին հավասար իրավունքներ:

Վերոնշյալ դատողությունների հիմնավորվածությանը և միջազգային իրավունքի, այդ թվում այդ իրավունքը մեկնաբանելու իրավասություն ունեցող համապատասխան մարմինների իրավական դիրքորոշումների տեսանկյունից անդրադարձել ենք սույն հետազոտության նախորդ գլխում⁴⁴: Սույնով միայն կվերահաստատենք, որ սոցիալական իրավունքների զգալի մասը դասական իրավունքներ են և հավասարապես ենթակա են պաշտպանության իրավունքի պաշտպանության հայտնի բոլոր միջոցներով:

Սոցիալական իրավունքների դասակարգումը՝ ըստ առաջնահերթության և կարևորության, իհարկե, բխում է նաև միջազգային փաստաթղթերի վերլուծությունից, սակայն սկզբունքային է այն փաստը, որ բոլոր սոցիալական իրավունքներն են պարտադիր պաշտպանության և ապահովման ենթակա. պարզապես տարբերվում է դրանց ապահովման հրատապությունը և ժամանակային չափանիշը:

Գործող Սահմանադրությամբ որոշակի սկզբունքների ներդրմամբ հանդերձ որոշ սոցիալական, այդ թվում՝ աշխատանքային, իրավունքներ «դուրս են մնացել» մարդու հիմնարար իրավունքների շարքից: Այսպես, Սահմանադրության 2-րդ գլխում՝ մարդու իրավունքների և ազատությունների շարքում, ամրագրվել են հետևյալ սոցիալական իրավունքները՝ *աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները, գործադուլի իրավունքը, միավորումների ազատության, այդ թվում՝*

⁴³ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2015թ.:

⁴⁴ Տե՛ս Սույն աշխատության Գլուխ 1:

արհեստակցական միություններ ստեղծելու իրավունքը, կրթության իրավունքը, իսկ այլ հիմնական սոցիալական իրավունքներ, ինչպես օրինակ, *առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների, հանգստի և սոցիալական ապահովության իրավունքները*, ամրագրվել են որպես պետության քաղաքականության հիմնական ուղղություն և երաշխիք:

Այժմ ըստ առանձին սոցիալական իրավունքների ներկայացնենք նախորդ և գործող Սահմանադրությունների կարգավորումները, առավելությունները և թերությունները, հասկանանք ամրագրվածության և պաշտպանվածության տեսանկյունից առաջընթացի և/կամ հետընթացի առկայությունը: Հաշվի առնելով աշխատանքային իրավունքի՝ սոցիալական իրավունքների շարքում ունեցած կարևորագույն տեղը՝ քննարկումը սկսենք հենց աշխատանքային իրավունքից:

1.1. Այսպես, աշխատանքային իրավունքի մասնագետի կարծիքով սոցիալական իրավունքների մաս կազմող աշխատանքային իրավունքների առումով գործող Սահմանադրությամբ ներդրվել են սոցիալական ազատության, սոցիալական արդարության, մարդասիրության (հումանիզմի), իրավահավասարության, օրինականության, ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքները, որոնք ՀՀ աշխատանքային օրենսդրության մեջ ներդրման կարիք ունեն⁴⁵:

Աշխատողների և գործատուների օրինական շահերի զուգակցման սկզբունքի կիրառումն անհրաժեշտ է ապահովել աշխատանքային հարաբերությունների ամբողջ ընթացքում՝ դրանց ծագումից մինչև լիակատար դադարումը ներառյալ: Ավելի ստույգ, այդ սկզբունքի առավելագույնս կիրառմամբ պետք է կանոնակարգվեն աշխատանքային իրավահարաբերությունների ծագման, ներառյալ նաև դրա շուրջ առաջացող վեճերի, աշխատողների աշխատանքի կազմակերպման, աշխատանքային պայմանները սահմանելու և գործող պայմանները փոփոխելու, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու կարգն ու պայմանները սահմանելու և դրանց շուրջ ծագող վեճերը կարգավորելու վերաբերյալ հարցերը: ՀՀ Սահմանադրությունն արդեն լիարժեք հնարավորություն է ստեղծում աշխատանքային օրենսդրության կատարելագործումը վերը նշված ուղղությամբ իրականացնելու համար⁴⁶:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք»: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ՝ «Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրությունը, նախորդ խմբագրության համեմատությամբ, չի պարունակում իր նորմերի անմիջականորեն գործողության մասին դրույթ (նախկին խմբագրությամբ տեքստի 6-րդ հոդվածն ամրագրում էր այդ դրույթը), ինչպես նաև այն, որ Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի վավերացրել Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 26-րդ հոդվածը, որը վերաբերում է աշխատանքում արժանապատվության իրավունքին, **հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրական ամրագրումն անհրաժեշտ իրավական հիմք է՝ աշխատանքային հարաբերությունների ոլորտը կարգավորող հատուկ օրենսդրության մեջ այն արտացոլելու և կիրառելու համար**: ՀՀ աշխատանքային օրենսգիրքը ներկա վիճակով չի պարունակում աշխատողների արժանապատիվ աշխատանքը, ներառյալ նաև աշխատանքի ընթացքում նրանց հոգեկան

⁴⁵ Տե՛ս Գ. Պետրոսյան, ՀՀ սահմանադրության նոր զարգացումները և աշխատանքային օրենսդրության բարեփոխման հրամայականը, Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները Հայաստանի Հանրապետության 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում, Միջազգային իրավունքի հայկական ասոցիացիա, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Երևան, 2016, էջեր 81-87:

⁴⁶ Տե՛ս Գ. Պետրոսյան, նույն աշխատությունը, էջեր 88-89:

անձեռնմխելիությունը երաշխավորող դրույթներ, ինչը չի կարող չազդել ոլորտում տիրող իրավիճակի վրա: Աշխատանքային իրավախախտումների վերաբերյալ տեսչական մարմինների վարչական գործերի և աշխատանքային վեճերով դատական պրակտիկայի ուսումնասիրություններն աներկբայորեն վկայում են, որ գործատուների կողմից աշխատողների աշխատանքի կազմակերպման ու կիրառման ընթացքում քիչ չեն աշխատողների պատվի և արժանապատվության նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դեպքերը: Ավելի ստույգ՝ հաճախ են գուտ աշխատանքային իրավախախտումները գուգորդվում աշխատողների նկատմամբ հոգեբանական բռնություններով ու նրանց արժանապատվության նսեմացման դեպքերով, որոնք անարձագանք են մնում աշխատանքային օրենսդրության մեջ զսպող ու ներգործող կառուցակարգերի բացակայության պատճառով: Այս իմաստով, կարծում ենք Սահմանադրության քննարկվող նորույթը լավագույն առիթ և հնարավորություն է ՀՀ աշխատանքային օրենսգրքի բացը վերացնելու համար, ինչը կարող է զգալիորեն նպաստել մեր երկրում արժանապատիվ աշխատանքի ինստիտուտի կայացմանը⁴⁷:

Ջարգացնելով աշխատանքային իրավունքի մասնագետի միտքը՝ ավելացնենք, որ վերոնշյալ դատողությունը և աշխատանքում արժանապատվության իրավունքը որոշակիորեն ամրագրված է նաև գործող Սահմանադրության 82-րդ հոդվածի տեքստում («Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի ... **արժանապատիվ աշխատանքային պայմանների** իրավունք»), ինչը վերահաստատում է նշված իրավունքը իմպլեմենտացնող օրենսդրությամբ՝ Աշխատանքային օրենսգրքում ամրագրելու անհրաժեշտությունը, որն օրենսդրի խնդիրն է:

1.2. Անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունքի վերաբերյալ նշենք, որ գործող Սահմանադրությունը որոշ չափով ընդլայնել է նշված իրավունքի բովանդակությունը և սահմանում է հետևյալը՝ «Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների ... իրավունք» (սակայն նշված դրույթը ևս ամրագրված է օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության նպատակները սահմանող գլխում (հոդված 82):

Փաստորեն, Սահմանադրության հեղինակները փորձ են կատարել անվտանգ և առողջ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքի ապահովման հարցում պետության բեռը արհեստականորեն թեթևացնել: Այս իրողությունն, իհարկե, լուրջ իրավական հետևանքներ չի կարող առաջացնել, քանի որ Հայաստանի Հանրապետությունը **Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի** շրջանակներում ստանձնել է համապատասխան պարտավորություն: Մասնավորապես՝ Հայաստանը Խարտիային միանալիս ստանձնել է պարտավորություն նաև Անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքի (3-րդ հոդվածի 1-ին կետ) ոլորտում, ինչը նշանակում է, որ պետությունն ունի ուղղակի պարտավորություններ այս իրավունքի իրացումն ապահովելու հարցում: Խարտիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը, խորհրդակցելով գործատուների և աշխատողների կազմակերպությունների հետ, պարտավորվում են՝ 1. ձևակերպել, իրականացնել և պարբերաբար վերանայել աշխատանքային անվտանգությանը, աշխատանքային առողջությանը և աշխատանքային միջավայրին վերաբերող առանձնահատուկ ազգային քաղաքականությունը: Այդ քաղաքականության առաջնային նպատակը պետք է լինի աշխատանքային

⁴⁷ Տե՛ս Գ. Պետրոսյան, ՀՀ սահմանադրության նոր զարգացումները և աշխատանքային օրենսդրության բարեփոխման հրամայականը, Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները Հայաստանի Հանրապետության 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում, Միջազգային իրավունքի հայկական ասոցիացիա, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Երևան, 2016, էջեր 89-90:

անվտանգության ու առողջության բարելավումը և աշխատանքի ընթացքում ծագող, դրա հետ կապված կամ տեղի ունեցող վթարների և առողջությունը վնասելու հնարավորության կանխումը՝ մասնավորապես նվազեցնելով աշխատանքային միջավայրին հատուկ վտանգների պատճառները,»:

Ավելին, **Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի** (Հայաստանը միացել է այս փաստաթղթին ևս) 7-րդ հոդվածը սահմանում է հետևյալը. «Մույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են աշխատանքի արդար և նպաստավոր պայմանների՝ յուրաքանչյուրի իրավունքը, մասնավորապես, ... b/ աշխատանքի այնպիսի պայմանները, որոնք համապատասխանում են անվտանգության և հիգիենայի պահանջներին:»:

Ստացվում է, որ գործող Սահմանադրությամբ այս իրավունքի մասով որոշակիորեն հետընթաց է կատարվել՝ ի համեմատություն նախորդ Սահմանադրության, որն այս իրավունքը հստակ սահմանում էր մարդու իրավունքների գլխում⁴⁸: Այս ամենը այն բացակասի միտման և պրակտիկայի շարունակությունն է, որի արդյունքում Աշխատանքի պետական տեսչությունը՝ որպես աշխատանքային իրավունքների ոլորտում վերահսկողություն իրականացնող և գործատուներին զսպող մարմին, դադարեց գոյություն ունենալ⁴⁹:

Աշխատանքային իրավունքների ապահովման և պաշտպանության մասին խոսելիս մեջբերենք նաև այս իրավունքի ոլորտում միջազգային հսկողություն իրականացնող մարմնի դիտարկումները և հարցադրումները Աշխատանքի պետական տեսչության լուծարման և վերջինիս գործառույթների մի մասի՝ Առողջապահական տեսչությանը փոխանցման մասին (Աշխատանքի տեսչության մասին ԱՄԿ 81-րդ կոնվենցիայի լույսի ներքո, որին Հայաստանը միացել է 2004թ.⁵⁰): Այսպես, Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաների և առաջարկությունների կատարման փորձագետների հանձնաժողովը (CEACR, այսուհետ՝ Հանձնաժողով), վերահաստատելով Հայաստանի գործատուների հանրապետական միության արձանագրած խնդիրները և մտավախությունները այս հարցում, իր 2017թ. 106-րդ նստաշրջանում հրապարակված դիտարկմամբ Կառավարությունից պահանջել է ներկայացնել մանրամասն վիճակագրություն աշխատանքային տեսուչների կողմից իրականացված ստուգումների վերաբերյալ՝ սկսած այն պահից, երբ այդ գործառույթները վերապահվել են Առողջապահական պետական տեսչությանը, ինչպես նաև գործատուների և աշխատողների քանակը, որոնք ապահովվել են այդ ստուգումների (այցելությունների) արդյունքում ըստ տարբեր ոլորտների⁵¹:

Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության կառավարությունից պահանջել է պատասխանել դիտարկումներին առ այն, թե ինչպես են իրացվում ԱՄԿ 81-րդ կոնվենցիայի սկզբունքները վերակազմակերպված համակարգի պայմաններում: Այս առումով պահանջել է հատուկ տեղեկատվություն հսկողություն և վերահսկողություն իրականացնող կենտրոնական մարմնի գործառույթների պատվիրակման մասին (հոդված 4), ինչպես նաև տեսչական/հսկողական նպատակներով հատկացված բյուջետային միջոցների և մարդկային ռեսուրսների մասին (հոդվածներ 10 և 11): Հանձնաժողովը նաև պահանջել է բացատրություն այն մասին, թե արդյոք Աշխատանքի պետական տեսչության բոլոր աշխատողները փոխադրվել են նորաստեղծ Առողջապահական պետական տեսչություն և արդյոք աշխատանքային հսկողության գործառույթներ իրականացնող տեսուչներն ունեն բավարար որակավորում այդ պարտականությունների կատարման

⁴⁸ Այս իրավունքի մեխանիկական «տեղափոխումը» Սահմանադրության մեկ այլ բաժին (գլուխ) ամենևին չի ազատում պետությանն իր ստանձնած պարտավորություններից, ինչպես նաև չի նվազեցնում տվյալ իրավունքի կարևորությունը և պաշտպանության ենթակա լինելը:

⁴⁹ Տե՛ս ՀՀ Կառավարության 25 հուլիսի 2013 թվականի թիվ 857-Ն որոշումը:

⁵⁰ https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:11200:0::NO:11200:P11200_COUNTRY_ID:102540:

⁵¹ https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:13100:0::NO::P13100_COMMENT_ID:3298657:

համար, ինչպես նաև այդ նպատակով նրանց անցած վերապատրաստումների բնույթը (հոդված 7):

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ դիտարկումներից անցել է երկու տարի, սակայն աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի վերաբերյալ խնդրահարույց իրավական (օրենսդրական) և գործնական խնդիրները նույնությամբ պահպանվել են: Նկատի ունենալով, որ աշխատանքային պայմանների և զվաղվածության անվտանգության ու առողջության հսկողության գործառույթները ընդամենը երկուսն են Առողջապահական տեսչության տասը գործառույթներից, Հանձնաժողովը Կառավարությունից պահանջել է նաև հստակեցնել, թե ինչպես է ապահովում, որ Առողջապահական տեսչությանը վերապահված մնացյալ գործառույթները բացառական ազդեցություն չունենան աշխատանքի տեսուչների առաջնային պարտականությունների վրա (հոդված 3(2)): Հանձնաժողովը կրկին պահանջել է պետությունից ձեռնարկել բոլոր միջոցները կենտրոնական աշխատանքային հսկողական մարմնից 81-րդ կոնվենցիայի 21-րդ հոդվածով սահմանված ամբողջ տեղեկատվությունը պարունակող տարեկան զեկույցի նախապատրաստում և ներկայացում, և զեկույցել այս մասով տեղի ունեցած ցանկացած զարգացում:

Ավելին, 2017թ. ուղիղ հարցմամբ Հանձնաժողովը, նշելով Հայաստանի գործատուների հանրապետական միությունից ստացված դիտարկումները, Հայաստանի Հանրապետության Կառավարությունից պահանջել է ներկայացնել կատարված աշխատանքային ստուգումների թիվը, ինչպես նաև չգրանցված աշխատողների բացահայտման դեպքերի թիվը, նման դեպքերի բացահայտման արդյունքում աշխատանքային տեսչության կողմից ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվություն և այդ միջոցների ազդեցությունը/արդյունքները կոնվենցիայի ներքո աշխատանքային տեսչության գործառույթների համատեքստում, որպիսին հանդիսանում է աշխատանքային պայմանների վերաբերյալ դրույթների կիրարկումը/ապահովումը և աշխատավայրում աշխատողների իրավունքների պաշտպանությունը:

Հանձնաժողովը նաև պահանջել է Կառավարությունից ներկայացնել բացատրություն (առաջին անգամ Կառավարությունը չի ներկայացրել, Հանձնաժողովը կրկին պահանջել է) դատական գործերի փոքրաթիվության, ինչպես նաև աշխատանքի տեսչության և դատական մարմինների համագործակցության խորացման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ (վերապատրաստումների կազմակերպում, դատական գործերի հաշվառման համակարգի ստեղծում՝ տեսուչների կողմից նախաձեռնված դատական գործերի ընթացքին/արդյունքներին հետևելու համար, և այլն): Հանձնաժողովը նաև պահանջել է (կրկնակի) տեղեկատվություն սոցիալական գործընկերների հետ տեղի ունեցած հանդիպումների քանակի և բովանդակության վերաբերյալ⁵²:

1.3. Նույն խնդիրն առկա է նաև անձի (աշխատողի) *հանգստի իրավունքի* ամրագրման առումով, քանի որ վերոնշյալ իրավունքին համանման ձևով հանգստի իրավունքը ևս ամրագրվել է օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության նպատակները սահմանող գլխում՝ այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը Խարտիայի 2-րդ հոդվածով (5-րդ կետով) ստանձնել է ուղղակի պարտավորություն աշխատողի հանգստի իրավունքի ապահովման հարցում: Այսպես՝ Խարտիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Աշխատանքի արդար պայմանների իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝ ... **5. տրամադրել շաբաթական հանգիստ, որը հնարավորին չափով պետք է համընկնի համապատասխան երկրում կամ տարածաշրջանում ավանդույթով կամ սովորույթով որպես հանգստի օր ճանաչված օրվա հետ,**»:

1.4. Աշխատանքի վարձատրության մասով 2005թ. Սահմանադրության 32-րդ հոդվածն ամրագրում էր «Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով

⁵² Տե՛ս

սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք»։ Գործող Սահմանադրությունը, ի տարբերություն նախորդի, ուղղակիորեն չի ամրագրում արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքը, սակայն դա տրամաբանորեն բխում է մեկ այլ դրույթի ամրագրման փաստից։ Մասնավորապես՝ Սահմանադրության 3-րդ գլխի 84-րդ հոդվածում ամրագրված է միայն հետևյալը՝ «2. Նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով»։ «Նվազագույն աշխատավարձ» հասկացությունն ինքնին ենթադրում է, որ դրանից ավելի ցածր վարձատրություն, որպես այդպիսին, չի կարող գոյություն ունենալ։

1.5. Սոցիալական որոշ իրավունքների առումով, ընդհակառակը, գործող Սահմանադրությամբ արձանագրվել է առաջընթաց։ Այսպես՝ Սահմանադրությամբ ամրագրվել է յուրաքանչյուր աշխատողի իրավունքը՝ աշխատանքից անհիմն ազատման դեպքում պաշտպանության։ Սա նշանակում է, որ պետությունը սահմանադրական մակարդակով է սահմանում աշխատանքային իրավունքների դատական պաշտպանության իրավունքը՝ պարտավորվելով ապահովել այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ մեխանիզմներ և դատական համակարգ։

Բացի այդ, գործող Սահմանադրության 57-րդ հոդվածը սահմանում է, որ աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով։ Այս դրույթի իրավական մեծ նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքային հարաբերությունների կողմերը չեն կարող աշխատանքային պայմանագրով նախատեսել օրենքով չնախատեսված աշխատանքից ազատման հիմք, ինչն էականորեն բարձրացնում է աշխատողի պաշտպանվածությունը գործատուի հայեցողությունից և հնարավոր չարաշահումներից։

1.6. Գործող Սահմանադրությամբ նաև ընդլայնվել են այն դեպքերը, երբ անձը պետությունից կարող է ակնկալել սոցիալական աջակցություն։ Այսպես, ՀՀ գործող Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք»։

2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 37-րդ հոդվածի տեքստի հետ համեմատության արդյունքում տեսնում ենք, որ նոր Սահմանադրությամբ որպես սոցիալական ապահովության իրավունքի ապահովման հիմքեր պահպանվել են նախկին հիմքերը, ավելին՝ ավելացվել են **մայրության, բազմազավակության, դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, աշխատանքը կորցնելու** դեպքերը։

Սահմանադրությունն անգամ տարբերակել է «**գործազրկություն**» և «**աշխատանքը կորցնել**» հասկացությունները, որոնք ոչ միշտ են համընկնում և նույնանում։ Այսպես՝ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ **գործազուրկ** է տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած, աշխատանք փնտրող և նշված օրենքով նախատեսված գործունեության որևէ տեսակով չզբաղված անձը, ով աշխատանք գտնելու նպատակով հաշվառված է լիազորված մարմնում, պատրաստակամ է անցնելու հարմար աշխատանքի և ստացել է գործազուրկի կարգավիճակ։

ՀՀ գործող օրենսդրությամբ դեռևս սահմանված չէ «**աշխատանքը կորցնել**» հասկացությունը (կարող ենք ենթադրաբար սահմանել, որ աշխատանքը կորցրած անձը դեռևս գործազուրկ չէ, քանի որ կարող է մինչև գործազուրկի կարգավիճակ ստանալը գտնել այլ աշխատանք կամ զբաղմունք, սակայն պետության որոշակի աջակցության կարիք ևս ունենալ⁵³), ինչպես նաև տվյալ իրավիճակում պետության՝ ի դեմս լիազոր մարմինների կողմից աշխատանքը կորցրած անձին տրամադրվող օգնության (կոնկրետ գործողությունների) տեսակը և ծավալը, արդյո՞ք նման իրավիճակում հայտնված անձին

⁵³ Մույն հետազոտության հեղինակի կարծիք և սահմանում։

տրամադրվում է միննույն ծավալի օգնություն, ինչպես որ գործազրկության դեպքում, թե այն տարբերվում է հաշվի առնելով տվյալ հասկացությունների տարբերակման փաստը: Իհարկե, ենթադրվում է, որ այդ օգնության շրջանակն այլ է, քան գործազուրկ անձանց տրվող երաշխիքները, և պետք է հստակորեն սահմանվի օրենքով:

Ինչ վերաբերում է **բազմազավակության դեպքում** սոցիալական երաշխիքներին, այս առումով ևս գործող օրենսդրությունը որևէ հատուկ իրավակարգավորում չի նախատեսել՝ դեռևս անկատար թողնելով Սահմանադրության վերոնշյալ դրույթը: Այն փաստը, որ բազմազավակ ընտանիքները օգտվում են կամ կարող են օգտվել ընտանիքների անապահովության գանահատման համակարգի շրջանակներում տրամադրվող արտոնություններից՝ այլ ընտանիքների հետ հավասար հիմունքներով, իհարկե, չի բավարարում Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքին: Տվյալ կատեգորիայի սուբյեկտների առանձնացումն ինքնանպատակ չէ և ենթադրում է, որ բազմազավակության դեպքում սոցիալական խնդիրներն առավել խիստ են արտահայտված. տվյալ ընտանիքները (ընտանիքների անդամները) առավել մեծ աջակցության կարիք ունեն: Նախորդ տարիներին շրջանառվում էր օրենքի նախագիծ՝ «Բազմազավակ ընտանիքների մասին», որն այդպես էլ չքննարկվեց Ազգային ժողովում և չընդունվեց: Նշված օրենքի նախագծի հիմնավորումներում հետաքրքիր տվյալներ են ներկայացված բազմազավակ ընտանիքների կազմի և նրանց սոցիալական խնդիրների մաս⁵⁴: Ավելին, ՀՀ 2019 թվականի բյուջեի նախագծով բազմազավակ ընտանիքների աջակցությանը վերաբերող ծրագիր և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսված չեն⁵⁵:

ՀՀ գործող կառավարության ծրագրում (2019) ևս որևէ նշում չկա բազմազավակության դեպքում սոցիալական աջակցության ապահովման մասին՝ որպես Կառավարության հստակ նպատակ և գործունեության ուղղություն⁵⁶:

ՂԺբախտ պատահարների և խնամքի կարիք ունենալու դեպքերն ըստ էության ընդգրկված են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ գործող օրենքով (ՀՕ-231, ընդունվել է 17.12.2014) սահմանված **«կյանքի դժվարին իրավիճակ»** հասկացության ներքո և կարգավորվում են տվյալ իրավական ակտով:

Կարող ենք փաստել, որ սոցիալական պաշտպանության վերոնշյալ հիմքերից միայն մայրության պաշտպանությունն է որոշակիորեն իրականացվում: Իհարկե, այս ոլորտը ևս պարբերական կատարելագործման և ընդլայնման կարիք ունի, ինչպիսին կարող է լինել, օրինակ, **մայրության նպաստի գումարի չհարկումը եկամտային հարկով՝ հաշվի առնելով մայրության նպաստի նպատակային նշանակությունը և մեր պետության ծնելիությունը խթանող հոչակած քաղաքականությունը**:

Անդրադառնալով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական իրավունքների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներին՝ նշենք, որ այն վաղուց ունի կատարելագործման կարիք: Ընդ որում, նման փոփոխությունների նախապատրաստումը և նախագծումը կատարվել է, սակայն ավարտին չի հասցվել և դեռևս իրավական ուժ ու կիրառություն չի ստացել⁵⁷:

Ստորև ներկայացնում ենք սոցիալական իրավունքների՝ ՀՀ նախկին և գործող Սահմանադրություններով ամրագրման զարգացումները և տարբերությունները.

⁵⁴ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/407/justification>:

⁵⁵ Տե՛ս <https://old.arfd.am/?p=48172>:

⁵⁶ Տե՛ս <http://www.gov.am/files/docs/3133.pdf>:

⁵⁷ Խոսքը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին է, որով հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակություն ներառելուն ուղղված քաղաքականությունը և օրենսդրությունը համապատասխանեցվում է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 2006թ. դեկտեմբերի 13-ին ընդունված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջներին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՐԱԳՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՆԱԽՈՐԴ ԵՎ ԳՈՐԾՈՂ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Իրավունքի տեսակը (անվանումը)	2005թ. Սահմանադրություն	2015թ. Սահմանադրություն
Աշխատանքի ազատ ընտրություն	✓ ⁵⁸	✓
Աշխատանքից անհիմն ազատման դեպքում պաշտպանության իրավունք		✓
Աշխատանքի ազատման հիմքերի ամրագրում միայն օրենքով		✓
Միավորումների (արհեստակցական միություններ ստեղծելու և/կամ անդամակցելու) ազատություն	✓	✓
Գործադուլի իրավունք	✓	✓
Մայրության պաշտպանություն	✓	✓
Մինչև 16 տարեկան երեխաների աշխատանքային իրավունքներ	✓	✓
Առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների իրավունք	✓	Ամրագրվել են օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները գլխում և սահմանվել որպես երաշխիք:
Հանգստի իրավունք, աշխատաժամանակի սահմանափակում, վճարովի արձակուրդի իրավունք	✓	Ամրագրվել են օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները գլխում և սահմանվել որպես երաշխիք:
Սոցիալական ապահովության իրավունք	✓	Ամրագրվել են օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները գլխում և սահմանվել որպես երաշխիք:

Վերոնշյալ աղյուսակից հստակ առանձնացնում ենք հետևյալ հիմնական դատողությունը. երեք խումբ իրավունքներ այժմ դարձել են օրենսդրական երաշխիք՝ ի տարբերություն նախորդ Սահմանադրության, որով նշված իրավունքները մարդու հրմնարար իրավունքների գլխում էին սահմանված: Դրանք են՝

- Աշխատանքի անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների իրավունքը,
- Աշխատողի հանգստի, աշխատաժամանակի սահմանափակման, վճարովի արձակուրդի իրավունքները,
- Սոցիալական ապահովության իրավունքը:

⁵⁸ Ամրագրված են «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխում:

Այժմ վերոնշյալ համեմատական վերլուծության լույսի ներքո փորձենք պարզաբանել հետևյալ հարցը՝ սոցիալական իրավունքների մի մասի սահմանումը պետության քաղաքականության հիմնական ուղղությունները գլխում, ոչ թե մարդու իրավունքների գլխում, ինչ իրավական հետևանքներ է առաջացնում և պետության համար պարտավորությունների ինչ ծավալ է ենթադրում:

Այն փաստը, որ որոշ սոցիալական իրավունքներ ամրագրվել և տեղ են գտել Սահմանադրության 3-րդ գլխում, ոչ թե մարդու իրավունքներին վերաբերող 2-րդ գլխում, դեռևս չի նշանակում, որ դրանք պակաս կարևոր են, կամ դրանց մասով պետությունը ստանձնել է ավելի փոքր ծավալի պարտավորություններ, առավել ևս որևէ ձևով չի նսեմացվում դրանց նշանակությունը և տեղը մարդու մնացյալ իրավունքների շարքում: Ի վերջո գործող Սահմանադրության 3-րդ գլխում ևս գործածվում է «իրավունք ունի» հասկացությունը, ինչն արդեն մեզ հուշում է սովյալ դրույթի իրավական նշանակությունը և հետևանքները պետության և անձի համար:

Այս կամ այն սոցիալական իրավունքի ամրագրումը սահմանադրության մակարդակով՝ անկախ նրանից, թե սովյալ հոդվածը որ գլխում է ամրագրված, ուղղակի հետևանքներ է առաջացնում պետության համար՝ ի դեմս իր լիազոր մարմինների, ապահովելու իրավունքների ամրագրվածություն և պաշտպանություն՝ համապատասխան իրավական ակտեր ընդունելու, հսկողության և վերահսկողության մեխանիզմներ ներդնելու, պատասխանատվության միջոցներ կիրառելու և այլ հնարավոր ձևերով:

Անձն ունի նաև սահմանադրորեն ամրագրված իրավունքների դատական պաշտպանության հնարավորություն: Մասնավորապես, բացի անձի կոնկրետ իրավունքն ապահովելու համապատասխան պետական լիազոր մարմնի կողմից պարտականությունը չկատարելու դեպքում իրավունքի դատական պաշտպանության դիմելու իրավունքը, սահմանադրորեն ամրագրված իրավունքի պաշտպանության համար համապատասխան սուբյեկտն իրավունք ունի դիմելու նաև Սահմանադրական դատարան՝ օրենսդրությամբ, այդ թվում՝ Սահմանադրության ամրագրված դեպքերում և կարգով այս կամ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի, այդ թվում գործնականում վերջինիս տրված մեկնաբանությունը Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու պահանջով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ցույց են տալիս սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրված իրավական ակտերը (հասկապես միջազգային) և դրանց վերաբերյալ իրավասու մարմինների կողմից կատարված վերլուծությունները (մեկնաբանությունները), ինչպես նաև մասնագիտական գրականությունը, սոցիալական իրավունքները այլ հիմնարար իրավունքների համեմատությամբ նվազ կարևոր և ստորադասված իրավունքներ չեն, ավելին՝ դրանց մեծ մասը անձի հիմնարար իրավունքների մաս են կազմում:

Այսպես, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների դաշնագիրը և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագիրը հավասար իրավական ուժ ունեցող միջազգային փաստաթղթեր են: *Դրանցով ամրագրված բոլոր իրավունքներն ունեն հավասար կարևորություն, ավելին՝ սերտորեն փոխկապակցված են, և դրանցից մեկի խախտումն անխուսափելիորեն հանգեցնում է նաև մյուսի ոչ պաշտպանված և ոչ բավարար չափով իրացման վիճակի:*

Նշված պնդմամբ հիմնականում հերքվում է Սահմանադրության նախագծի հեղինակների հետևյալ կարծիքը և պնդումը. «Երբ սոցիալական իրավունքներին սահմանադրությամբ տրամադրվում է ամրագրման և պաշտպանության միևնույն ռեժիմը, ինչ մարդու «դասական» հիմնական իրավունքներին (ինչպես 2005թ. փոփոխություններով Սահմանադրությամբ), ապա առաջ են գալիս մի շարք խնդիրներ⁵⁹: Առաջին՝ առաջանում է սխալ և անիրագործելի ակնկալիք, որ սոցիալական իրավունքները պետք է նույն կերպ անմիջականորեն գործեն, ինչպես «դասական» հիմնական իրավունքները, և պետությունն էլ պետք է հավասար ձևով ապահովի դրանց իրականացումը: Եվ ընդհակառակը, քանի որ իրականում սոցիալական իրավունքները ունեն ավելի ցածր աստիճանի պարտադիրություն պետության համար, գործնականում այդ մոտեցումը մեխանիկորեն տարածվում է նաև «դասական» հիմնական իրավունքների վրա՝ դրանով ստեղծելով տպավորություն, թե «դասական» իրավունքները ևս խիստ պարտադիր բնույթ չունեն պետության համա՝⁶⁰ : Օրինակ՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը կամ բնակարանի իրավունքը 2005թ. փոփոխություններով Սահմանադրությամբ տեղ էին գտել հիմնական իրավունքների շարքում: Դա նշանակում էր, որ անձը կարող էր դիմել դատարան և պետությունից պահանջել անվճար բժշկական սպասարկում բոլոր տեսակի հիվանդությունների պարագայում, ինչը գործնականում անիրագործելի է: Քանի որ պետությունը չի կարող իրագործել այս իրավունքի պաշտպանությունը, ապա ստացվում էր, որ կան հիմնական իրավունքներ, որոնք կարող են ամեն դեպքում խախտվել: Սա էլ հանգեցնում է այն անցանկալի հետևանքին, որ բոլոր հիմնական իրավունքների պաշտպանության մակարդակը պետության կողմից ինքնաբերաբար թուլանում է, իսկ մարդն էլ դրանք ընդհանրացնում է իր բոլոր իրավունքների մասով և գալիս այն եզրահանգման, որ մարդու իրավունքների սահմանադրական ամրագրումը պատրանք է, և գործնականում այդ իրավունքները պաշտպանված չեն:»:

Ինչպես նշվեց վերը և մանրամասն ներկայացվել և վերլուծվել է սույն հետազոտության առաջին գլխում, անգամ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Գլխավոր հանձնակատարի պաշտոնական դիրքորոշմամբ քաղաքական, քաղաքացիական և տնտեսական ու սոցիալական իրավունքների միջև տարբերակումը, առավել ևս՝ դրանց դասակարգումը մեկը մյուսի նկատմամբ ստորադասման ձևով, արհեստաձին է և վաղուց իրեն սպառած գործողություն է հանդիսանում:

⁵⁹ Մանրամասների համար տե՛ս W. Sadurski, նշվ. աշխ., էջ 228-230:

⁶⁰ Այս պնդման հավաստիությանը և իրավական հիմքերին անդրադարձել ենք միջազգային իրավունքի վերաբերյալ գլխում, կանդիդատական քննարկում և ստորև:

Այս դատողության լույսի ներքո անդրադառնալով 2015թ. Սահմանադրության հայեցակարգում տեղ գտած մի շարք վերլուծություններին՝ նշենք, որ անգամ այն պարագայում, երբ մի շարք սոցիալական իրավունքներ ամրագրվել են Սահմանադրության 3-րդ գլխում և ամրագրվել որպես «երաշխիք» և «պետության քաղաքականության նպատակ», դեռևս չի նվազեցնում դրանց կարևորությունը և իրավական նշանակությունը:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության նախորդ և գործող Սահմանադրությունների համեմատական վերլուծության արդյունքներին՝ ամփոփենք, որ **սոցիալական որոշ իրավունքների մասով արձանագրվել է առաջընթաց, իսկ մյուսների մասով, ընդհակառակը, որոշակի առումով հետընթաց**: Այսպես, աշխատանքի անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, անձի հանգստի, աշխատաժամանակի սահմանափակման, վճարովի արձակուրդի, ինչպես նաև սոցիալական ապահովության իրավունքներն այժմ ամրագրվել են որպես օրենսդրական երաշխիք, ինչը, մեր կարծիքով, անընդունելի է և չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին: Այս կարևորագույն իրավունքների մասով օրենսդրին որոշակի հայեցողություն վերապահելը կամ անհասցե թողնելը (այս դատողությունը բխում է «օրենսդրական երաշխիք» հասկացության մեկնաբանությունից) աղավաղում է այս իրավունքների կարևորությունը և հնարավորություն տալիս օրենսդրի կողմից հայեցողության դրսևորման, որպիսի հանգամանքը չի համապատասխանում Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի ձևակերպումներին:

Ամեն դեպքում, անկախ վերոգրյալ փաստից և Սահմանադրության երրորդ գլխի վերտառությունից՝ Սահմանադրությամբ գործածվում է «յուրաքանչյուր ոք իրավունք ունի» կամ «յուրաքանչյուր աշխատող իրավունք ունի» ձևակերպումները, ուստի պնդել, թե դրանք անձի հստակ իրավունքներ չեն և երաշխավորված չեն դրան համապատասխանող պետության պարտականությամբ կամ իրավունքի պաշտպանության միջոցներով, չի համապատասխանի իրավական պետության սկզբունքներին:

Սույն հետազոտության արդյունքները ևս մեկ անգամ վկայում են, **որ սոցիալական օրենսդրությունն արմատական վերափոխման և համակարգայնացման կարիք ունի**: Ընդ որում, անհրաժեշտ է ընդունել մեկ ընդհանուր իրավական ակտ (օրենք)՝ կարգավորելով սոցիալական ապահովության բոլոր հիմքերն ընդհանուր առմամբ, ապահովել համակարգային կապ բոլոր սոցիալական իրավունքների միջև՝ ձևավորելով նաև կանխատեսելի և կոնսոլիդացված իրավական ակտ, իսկ սոցիալական այլ իրավունքների վերաբերյալ ընդունել հատուկ իրավական ակտեր՝ արտացոլելով կոնկրետ իրավունքի իրացման առանձնահատկությունները և տվյալ ոլորտում պետության քաղաքականության ուղղությունները:

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ անգամ տրված չէ **«սոցիալական ապահովություն», «աշխատանքը կորցնել», «բազմազավակություն»** հասկացությունների սահմանումը (սահմանված է միայն «սոցիալական աջակցություն» հասկացությունը, որն ամբողջությամբ չի նույնանում մատնանշված հասկացության հետ), ինչը ևս փաստում է մեկ միասնական իրավական ակտի շրջանակներում նաև այս սահմանադրական հասկացությունների և այլ կիրառելի հասկացությունների **օրենսդրական** սահմանման անհրաժեշտության մասին: Նշված հասկացությունների սահմանումը հստակություն կմտցնի և ուղենիշ կհանդիսանա համապատասխան իրավական նորմերի մեկնաբանման և պետության պարտավորությունների ծավալի հստակեցման հարցում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Սահմանադրական փոփոխությունների շրջանակներում վերանայել որոշ սոցիալական իրավունքների՝ անձի հիմնարար իրավունքների շարքում վերստին ներառելու հարցը՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների ամբողջական կատարումը, ինչպես օրինակ անվտանգ ու առողջ աշխատանքային պայմանների իրավունքը, անձի հանգստի, աշխատաժամանակի սահմանափակման, վճարովի արձակուրդի, սոցիալական ապահովության իրավունքները:
- Ընդունել նոր օրենք «Սոցիալական ապահովության մասին» վերտառությամբ՝ համակարգային ձևով ամրագրելով Սահմանադրությամբ սահմանված սոցիալական ապահովության տրամադրման բոլոր հիմքերը և դրանց իրացման կառուցակարգերը, ինչպես նաև սահմանելով «սոցիալական ապահովություն», «գործազրկություն», «աշխատանքը կորցնել» և կիրառելի այլ հասկացություններն ու դրանց իրավական նշանակությունը:
- Հիմնովին վերանայել սոցիալական առանձին իրավունքների կամ առանձին խմբերի անձանց իրավունքների վերաբերյալ ընդունված բոլոր իրավական ակտերը՝ համապատասխանեցնելով Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով ամրագրված պետության պարտավորությունների ծավալին (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց, բազմազավակ ընտանիքների և այլն), ստեղծելով փոխկապակցված և համակարգված իրավական ակտերի համակարգ (համապատասխան օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր):
- Ապահովել աշխատանքային իրավունքների նկատմամբ հսկողություն իրականացնող տեսչական մարմնի ստեղծում՝ Աշխատանքի տեսչության մասին ԱՄԿ 81-րդ կոնվենցիային և ՀՀ կիրառելի իրավական ակտերին (օրինակ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք) համապատասխան:
- ՀՀ Կառավարության ծրագրում ավելացնել դրույթներ սոցիալական իրավունքների ոլորտում պետության քաղաքականության մի շարք թիրախային ուղղությունների վերաբերյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ, բազմազավակ ընտանիքների աջակցություն, ինտեգրված սոցիալական ծառայությունների նոր ինստիտուտի ներդրում (վերջինս արդեն երկու տարի ընթացքի մեջ է, բավականին մեծ քայլեր են կատարվել, սակայն Կառավարության ծրագրում ընդգրկված չէ):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք, Հեղինակային խումբ, Երևան, 2016:
2. ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողով, Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն), Երևան, 2015:
3. Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, Համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016թ.:
4. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2015թ.:
5. «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), Նախնական կարծիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ, Ստրասբուրգ, 2015թ. սեպտեմբերի 10, Կարծիք No. 757/2014:
6. Գ. Պետրոսյան, ՀՀ սահմանադրության նոր զարգացումները և աշխատանքային օրենսդրության բարեփոխման հրամայականը, Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները Հայաստանի Հանրապետության 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում, Միջազգային իրավունքի հայկական ասոցիացիա, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Երևան, 2016:
7. УПРАВЛЕНИЕ ВЕРХОВНОГО КОМИССАРА ОРГАНИЗАЦИИ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА, Часто задаваемые вопросы относительно экономических, социальных и культурных прав, Изложение фактов № 33.
8. W. Sadurski, Postcommunist Charters of Rights in Europe and the U.S. Bill of Rights / Law and Contemporary Problems, Vol. 65 (Spring 2002).
9. FUNDAMENTAL SOCIAL RIGHTS IN EUROPE, EUROPEAN PARLIAMENT, Directorate General for Research, WORKING PAPER, 2-2000.
10. Economic, Social and Cultural Rights as Human Rights: An Introduction, Olivier De Schutter, CRIDHO Working Paper 2013/2.
11. European committee of social rights, The relationship between European Union law and the European Social Charter, Working Document, 15 July 2014.
12. COMMITTEE ON ECONOMIC, SOCIAL AND CULTURAL RIGHTS, GENERAL COMMENT No. 191, The right to social security (art. 9).

Էլեկտրոնային աղբյուրներ

13. www.ilo.org
14. ec.europa.eu
15. www.europarl.europa.eu
16. www.sovremennoepravo.ru
17. www.e-draft.am
18. www.gov.am
19. www.arlis.am
20. www.coe.int
21. www.mlisa.am
22. www.ssss.am
23. www.parliament.am

Միջազգային փաստաթղթեր

24. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
25. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագիր
26. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր
27. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա
28. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
29. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
30. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա
31. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, վերջինիս առաջին արձանագրություն
32. Եվրոպական սոցիալական խարտիա
33. Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա
34. Հիմնարար իրավունքների մասին ԵՄ խարտիա
35. Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիա, վերջինիս առաջին արձանագրությունը մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին (Ման Սալվադորի արձանագրություն, 1988)
36. Մարդու և ժողովուրդների իրավունքների մասին աֆրիկյան խարտիա, վերջինիս արձանագրությունը Աֆրիկայում կանանց իրավունքների մասին (2003),
37. Երեխայի իրավունքների և բարօրության հիմքերի մասին աֆրիկյան խարտիա (1990)
38. ԱՄԿ 102-րդ կոնվենցիա Սոցիալական ապահովության (նվազագույն ստանդարտների) մասին
39. ԱՄԿ թիվ 121 կոնվենցիա Աշխատանքային խեղումների դեպքում արտոնությունների մասին

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրություն

40. ՀՀ Սահմանադրություն (ընդունվել է 2005)
41. ՀՀ Սահմանադրություն (ընդունվել է 2015)
42. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք (ՀՕ ՀՕ-243-Ն, ընդունվել է 22.12.2010)
43. «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-57-ՀՆ-0800-1, ընդունվել է 14.04.1993)
44. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-231-Ն, ընդունվել է 17.12.2014)
45. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-154-Ն, ընդունվել է 12.12.2013)
46. «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների» մասին ՀՀ օրենք (ՀՕ-160-Ն, ընդունվել է 27.10.2010)
47. ՀՀ Հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, ընդունվել է 04.10.2016)
48. «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-152-Ն, ընդունվել է 11.12.2013)
49. ՀՀ Կառավարության 25 հուլիսի 2013 թվականի թիվ 857-Ն որոշում